

Ք

ՀԱՄԱԼԵԱՆՑ Ա.

Վ/Դ/6

# ԱՍՏՈՒԾ ԱՂՔԱՌԻ ԿԵՐՊՈՒՄ

Զ Բ Ա Յ Յ

Բարիք տուող Աստուածը  
կարող է խել էլ. եր, 18.



Թ. Ի Ֆ Լ Ի Ս  
Տարած Յովաննես Մարտիրոսեանցի

1896

291.99  
Ք-17

81 ամ  
+ 159

Հ Հ 176


ՔԱՄԱԼԵԱՆՑ Ա.

# ԱՍՏՈՒՅԹ ԱՂ.ՔԱՏԻ

ԿԵՐՊՈՐՈ

Զ Բ Ա Յ Յ

Բարիք տուող Աստույթի  
կարգ է ի լել է լ. եր, 18.



1088

Թ Ի Ֆ Լ Ի Ա

Տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի

Տիֆ. տիպ. Ի. Մարտirosianca, Օրբ. յն. № 1-2.

1896


2000

# ԳԱՅԻ ԲՈՒԺԱԿԱՆ

## ԱՊԱՐԱՐ

Дозволено цензурою. Тифлисъ, 9 декабря 1895 г.

28-158



159-2000

(2082-91)

## ՆՈՒԷՐ ԻՄ ՀԵՅԹ ԱԿԵՑԻՔԻՆ

Ուսումնական վարժապետ ու դաստիարակ  
շատ եմ ունեցել զալոց մոնելու օրից, բայց ոչ  
մինը այն բարերար տպաւորութիւնն ու դրոշմը  
չի թողիլ հոգուս ու սրտիս վրայ, ինչ որ դու  
քու անզրագէտ, ու ինադաւթար տեղովի,  
իմ պատուական հայր: Ընտիր դաստիարակս  
սկզբից դու ես եղել, զրա համար քու առաքի-  
նի անունովն եմ զարդարում ճակատը զրքովիս,  
որի նիւթը լնել եմ Գանձակ քեզ պէս մի խեղճ  
արհեստաւոր մարդոց:

## ՈՐԴԻԴ ՔԱՅՄԱԿԱՆՅԱՅ Ա.

Դեկտ. 95 թ.

Թիֆլիս.

նից շնորհակալ եմ: Այսքան ժամանակ խոնարհ ծառախեցիր ու մխիթարեցիր. վտխարէնը կեանքով կշտանաս: Ես քեզ հալալ քբալինքով եմ մեծացրել, գու էլ որդեալ, արդար աշխատանք սիրիր: Տնանկից, չքաւորից մի զգուիլ, հացիով պատռը նրա հետ կիսիր. անհոգ կաց, Աստուած մեծ է, սոված չես մնալ: Լաւութիւն արա, ջարը զցիր, եթէ ձուկը չիմանայ, Ստեղծողը կիմանայ:

Այս խրամները տուաւ մալրը և էզսը վախճանուեց: Օսէվը վող չունէր, պարտք վերցրեց հարեանից. այն վողով մօրը թագել տուաւ, ետով որանրա դուանը օրավարձի բանեց, պարտքը վճարեց, ու վերջը տեսաւ, որ չի կարում իրանց գիւղում մարդաշարք ընկնի, մտքումը զրեց քաղաք գնայ, քանի ջահել է արհեստ սովորի, ու նրանով հալալ աշխատանք անի:

Հին ժամանակ սովորութիւն կար, եթէ մէկի մօտ խնդրաբան ունէին, ընծայ էին տանում նրա համար, որ բերանը քաղցրացնեն: Օսէվն այդ բանը զիտէր. երեք գաթա թխել տուեց. հետեւ էլ մի եփած պարարտ բարդ դրեց տոպրակի մէջ, իւր համար քիչ հաց ու պանիր վերցրեց: Հայրական տունը յանձնեց հարեանին, որ բանացնի ու վարձի վոխարէն ամեն մի նաւակատկի մօր զերեզմանը օրհնել տայ: Ինքը

Ա.

Վաղ ժամանակ ասլում էին մի պառաւ ու տղայ: Պառաւը շատ ժամասէր ու արդար կլն էր. որդին էլ շատ պատռական, խոնարհ հոգի էր՝ անունը Օսէվի: Ինչ վաստակում էր արդար քրտինքով, բերում էր մօրը տալիս: Ուժապառ պառաւը Աստծուն գոհութիւն էր մատուցանաւմ և որդու համար արեշատութիւն խնդրում: Որդին-ոչ մի ազգական չունէր. զիտէր թէ մայրը ինչ նեղութիւններով է իրան մեծացրել, այդ հասակը հասցրել. զրա համար էլ մօրը իւր աչքի լոյսի պէս էր սիրում. հէնց գլշեր-ցերեկ նրա զլիսովն էր պտտում, կեր ու խում մոռացած նրան սպասաւորում: Բարեպաշտ մայրը որդու հոգատարութիւնը տեսնելով որտի մէջ մխիթարում էր և ամեն յեռի ու կոկիծի համբերութիւնով զիմանում:

Զմեռնամտին էր. յանկարծ մայրը հոգեարք ընկառ, կանչեց որդուն զլիսավերել և ասաւ.

— Օսէվի, երկնքից մինչեւ զետինք քեզա-

գնաց հանգստարան, մօր տապանի առաջ չոքեց  
և ասաւ. «մայր իմ, գնում եմ արկեստ սովորեմ,  
արդար աշխատանք անեմ ու զամ հօրս  
ծովիր ծիւմ»: Գերեղմանը համբուրեց, Աստծու  
անունը տուաւ, գիւղից հեռացող կածանը բրունց,  
որ գնալ մեծ ճամբէն դուրս զայ:

**Բ.**

Ուրիշ երկու հոգի, Օսէփից հասակով մեծ,  
նոյնալէս զնում էին օտար աշխարհ: Նրանցից  
մէկը մահաւի ունէր ուսին, միւսն էլ մի ցա-  
քատ դոտիկը խրած: Եկան ու ճամբում Օսէփին  
սպատահեցին.

— Բարի լոյս, այ տղայ, ասին նրանք:

— Աստծու բարին ձեզ, պատասխանեց Օ-  
սէփը: Ամօթ չլինի հարցնելը, ինչ մարզիլ էք,  
ուր էք զնում:

— Մեղանց մինը չոբան է, մինը բաղման,  
խօսեցին նրանք. աղքատութեան երեսից փա-  
խած գնում ենք աշխատանք անելու, փող դա-  
տելու:

— Ես էլ այլպէս բանի եմ զնում, վլայ  
բերաւ Օսէփի:

— Պէ լաւ ենք պատահել, ընկեր եղիր,  
գնանք միատեղ:

Օսէփը նրանց վրայ խոր նայեց ու ծանր  
խօսեց.

— Փալը կը զամ, բայց աշխատանքը ես  
հալալ քրտինքով կուգեմ:

— Բան ասա, բան լինի, հեգնելով ասին  
բաղմանն ու չորանը, աշխատանքը արդար քըր-  
տինքով կը լինի, բաս հօ չեն բերիլ, նուրիրիլ:

— Պէ հիմի խօսք է ասում եմ, ինչո՞ւ էք  
մեղաղրում: Ընկեր դառնալուն դէմ չեմ, միայն  
մինչև մի բանի մէջ քրտինք թափած չըլինեմ,  
վաստակի բաժին չեմ ուզիլ: Իմ պայմանն ար-  
է, եթէ յօժար էք, զամ. եթէ չէ՝ այ դուք,  
այ ճամբէն:

— Այ օրհնեալ հոգի, խօսեցին վշտացած  
բաղմանն ու չորանը. ինչ ես երեխայ-երեխայ  
խօսում. բաս ով կը լինի, որ առանց քրտին-  
քի ուզենայ մի բանի տիրանալ: Ա'րի, գնանք  
երեքով, ինչ որ վաստակենք, Աստծու տակին  
հաւասար բաժին անենք:

— Ուզիդ:

— Ուզիդ:

— Առանց նենդութեան:

— Աստուած վկայ, առանց նենդութեան:

— Լաւ, Աստծու անունը որ տալիս էք,  
հաւաստում եմ, գնանք:

Խօսք տուին ելեքով հալալ աշխատանք  
անել ու ճամբէն շարունակեցին զրոյց անելով:

**Պ.**

Օրը շոք էր. կարձես երկնքից կրակ թափուելիս մինէր. երկար տարածութեան վրայ ոչ ծառ կար, ոչ շուաք. հէնց մի գլուխ խէճ ու քար էր: Տօֆիլ ձեռից զղիտէին՝ ինչ անեն: Ճատ ու քիչ դնալին Աստուած զիտէ. բաղմանն ու չոբանը թռացեր, պարկները չէին կարում տանել, շոքի ձեռից մէկ այստեղ էին ընկնում, մէկ այնտեղ: Երկար նեղութիւն քաշելուց ետք հասան մի սարի ստորոտ. ճամբէն սարի գլխով պէտք է անցնէր. ուժից բոլորովին չընկնելու համար ուղեցին հանգստանալ, Պօտիկ ցուրտ աղբիւր գտան, շալակները վէր զրին, կապոցները ետ արին, հաց փռեցին, որ նիւթ առնեն, սարը հեշտ բարձրանան: Պարի լանջերը ծածկուած էին քարերով, քերծի կտորներով ու նրանց միջով մի քանի նեղ կածաներ էին գնում: Կստան աղբիւրի մօտ: Հաց ու պանիրը կամաց կտորում էին, ցուրտ ջուրը վրէն խմում ու միտք անում, թէ որ կածանը բըռնեն դնալիս: Բաղմանը աղբիւրի վրացից պինը վեր քաշելով բացականչեց.

— Խուալ, սիրտս եղուեց:

Խոռով Օսէփին նայելով հարցրեց:

— Օսէփ, առողջութիւնը կուղես, թէ հարստութիւնը:

Օսէփը պատասխան ցուուաւ. բաղմանը շարունակեց խօսքը.

— Մարդիկ կան աշխարհի վրայ հաղարների տէր. բայց կարօտ են որպատէ ջուր խմելու, վաղին ուժով կեանք երը քաշ են տալիս: Մեղ պէս անփող մարդիկը եթէ առողջութիւն էլ չունենան, ինչ կը լինի նրանց ճակը:

— Ի՞նչ դժար է խմանալը. կրակ ու սլատուհան. ուրիշ ինչ պէտք է լինի, պատճանիսնեց չորանը:

— Ինչու էք ալդպէս դատում, ասաւ Օսէփը. միթէ աշխարհի վրայ չկան այնպիսի մարդիկ, որ համ աղքատ են, համ հիւանդ:

— Ինչու չկան, խօսեց բաղմանը, բայց ինչի նման է աղքատ հիւանդի կեանքը: Ուհետու Աստուած թափի ինձ այդ օրից, ասաւ նա ամբողջ մարմնով սարսրուելով:

— Զարմանում եմ, ասաւ Օսէփը, որ դուք աղքատութիւնից ալդքան զգում, երես էք թեքում: Փողն էլ հօ Աստուած չի ստեղծել, որ առատօրէն ամենին բաշխի: Ամենաթանկ բանը առողջութիւնն է աշխարհի վրայ և այդ բանը Արարչից ստանում ենք ձրի, բայց արժէքը չենք իմանում: Երբեմն նրա հետ Աստուած հարստու-

թիւն էլ է տալիս, որ մարդու սիրտը փորձի:  
Ով երախտամուռթիւն կանի, ի՞նչ ասել կու-  
զի, կը զրկուի ստացած թէ առողջութիւնից և  
թէ հարստութիւնից: Մենք ինչո՞ւ ենք յուսա-  
հատում. եթէ փող չունենք, առողջութիւն հօ-  
տնինք: Վայ այս աղքատի օրին, որ համ  
հիւանդ կը լինի, համ ծեր: Աղպիսի անճարնե-  
րին մեր պարտականութիւնն է օգնելը:

— Ի՞նչ ասել կուզի, որ օգնելը հարկաւոր  
է, վրայ բերեց չոբանը, մանաւանդ երբ աղ-  
քատը ծեր է ու հիւանդու:

— Ճատ ուղիղ ես դատում, ընկեր, հաւա-  
նութիւն տուաւ բաղմանը. ծերին, արատաւոր-  
ներին օգնելը հարկաւոր է, որովհետեւ զա  
հոգու էլ վարձք է: Աշա դնում եմ օտա-  
րութիւն, ինչ նեղութիւն լինի, պէտք է  
քաշեմ, դառ քրտինքով փող վաստակեմ,  
ետով այդ փողերով մեծ այզի առնեմ, մէջը  
նստեմ, վախէլութիւն քաշեմ: Միտքս այս  
է, որ ով ազգու մօտով անցկենայ, կանչեմ,  
լիսլի ուստացնեմ, ետով թողնեմ, որ ճամբէն  
շարունակի:

— Ես այզի չեմ ուզում, ընկեր, քիթ ու  
պուռնզը վեր քաշերով խօսեց չոբանը, ով նրա  
զլխացաւանքն ունի, զետինը փորի, շենքը կըո-  
րի, որդու պէս լինամք քաշի, վերջը կամ կար-

կուտի բաժին դառնայ կամ թրթուռի: Զէ,  
ես մտքիս մէջ զրել եմ, քրտնքելով փող վաս-  
տակիմ, այդ փողով առնեմ ոչխար, տաւար.  
մահակը ուսիս զրած հօտն ու նախիրը տանեմ,  
կանաչ տեղերում արտացնեմ: Առաւօտ իրիկու  
կը կթեմ, մէր կանեմ. եղից, պանրից ամեն մի  
ճամբորդի, անցորդի բաժին կըտամ: Ֆեր աղ-  
քատ տեսնելիս կը կանչեմ, վասիլիկ զառներից  
մինը կը մորթեմ, նրանով կը մեծարեմ, կը  
վայնեմ, որ Աստուած վերելից տեսնի ու ուրա-  
խանայ իմ հիւրասիրութեան և բարեսրտու-  
թեան վրայ:

Օսէփը լուռ լսում էր նրանց սրտի փա-  
փազները և իւր մէջն ուրախանում. «Ի՞նչ բա-  
րեմիտ և ազնիւ ընկերների պատահեցրեց Աս-  
տուած»: Բաղմանն ու չոբանը նրա լուռթեան  
վրայ զարմանալով հարցրին.

— Օսէփ, մենք մեր սրտի ուխտն ասինք,  
բայ քու մտքումն ի՞նչ կայ, դու ի՞նչ ես ուզում,  
առա, տեսնենք:

— Ի՞նչ որ Աստուած արժան կանի, այս  
կուգեմ, պատասխանեց Օսէփը. ոյժո ի՞նչ է, որ  
հակառակուեմ նրա կամքին: Դուք իմաստունի  
պէս ձեր ափում թքել, իմացել էք, որ ան-  
պատճառ հարստանալու էք: Կարելի է վաս-  
տակի փոխարէն Աստուած փորձանքների է  
կանգիպեցնում:

Պ.

Այս խօսքի վրայ էր, որ աչքները բարձրացրին ու տարի լանջվէրում տեսան մի դլխակար ծերունի. դավիս էր վերևից զաւազանի տժում և անզորութիւնից տըմբտըմբում, օրօրուում էր: Ճամբորդները անակնկալ որ տեսան, զարմանքից մնացին հացի պատառը բերաններում ստուած: Ֆերունու վրայ էին խօսում, յանկարծ ծերունի լոյս ընկառ: Այն էլ ինչ ծերունի, այլակերպ բան առա ու թող. շորերը գըզդրուած, կռները, արմունկները բայց, ոտները, ծնկները կարմիր վէրքերով պատած: Նիշար, լզար, քթից բռնէիր, հողին կըտար: Փոքր ինչ որ մօտեցաւ, տեսան ճամբորդները որ ծերունին մի աչքից էլ դուրկ է: — Այս ինչ զէշ արարած է, փախսացին բաղմանն ու չորանը և քիթ ու պոտոնկ վեր քաշեցին, իսկ Օւէփը նեղ օրեր տեսած, իւր մօրը հիւանդ պահած ու կարեկցելու սովորած, իսկոյն հացը ձեռից վէր դրաւ, զգուելու փոխարէն վազեց ծերունուն զիմաւորեց, թեկից բռնած աղբլսրի մօտ բերաւ, իւր չուխէն հանեց, դիտնին վաւեց, ծերունուն նստացրեց ու կարեկցութեամբ հարցըեց:

— Բարի ջան, այս վիճակին որտեղից ես

գալիս տնքտնքալէ, ովքեր են քո ընկերները, որ քեզ մենակ թողել, իրանք առաջ են ընկել:

— Ե՛, որդի, ինչ արած, տկար ձախող խօսեց ծերունին. ծերութիւնն ամենին էլ ձանձրացնում է, ոչ ով երկար միջոց ընկերութիւն չի անում. իւրաւորներն էլ անզնական թողում, հեռանում են: Այժմ մնացել եմ սովոր բերանում այս ամայի տեղը:

Այս սրտամորմոք խօսքերը լսելիս Օւէփը լացակնեց: Ֆերունին հանդարտութիւնով խօսքն առաջ տարաւ.

— Կարելի է Աստուած չուզեց, սովամահ լինիմ, որ ձեզ պէս ճամբորդների պատահեցրեց:

Այս ասելով ծերը աչքը գցեց բաղմանին ու չորանին, որոնք փափուկ հացն ու տհալը տոպրակներում թաքցնելով մի կտոր չոր հացլ ու պանիր մեկնեցին նրան ու ասին.

— Առ, բարի, կել, կշտացիր:

Ֆերունին հացն ու պանիրը տնդղեց և թոյլ ձայնով ասաւ.

— Ինձ ով է տուել, որդիք, այն ատամները, որ կարենած այս հացը փշել. պանիրը բացի չոր լինելուց աղի էլ է, վէրքերս կը մզկրտան:

— Աղբլսրի ջուրն այստեղ չի, վեր կալ, մէջը զցիր, հացը կըփափիկի, պանիրի աղն է

կը կորչի, խորհուրդ տուաւ հաստավիզ չոբանք:  
Միւս կողմից էլ բազմանը տնաղ անելով վրայ  
բերաւ.

— Օսէփի, աղքատը մեր տուած բաժնին  
հաւան չի, դու տուր, տեսնենք:

Օսէփի սրտին աւելի զիպաւ, որ ընկերները  
ծերի հետ արդպիս կոպտաբար են վարւամ.  
զլուխը կախ մօտեցաւ իւր տոպարակին, բերանի  
թելը արձակից ու խօսեց.

— Բարի, Աստծոց թաքոն չի, քեզանից  
ինչ թաքոն լինի. պաշար եմ շինել տուել,  
քաղաք տանում, որ ինձ համար զործ գտնողին  
ընծայ տամ:

— Լաւ ես արել, որդի, աշխարհումս առանց  
ընծայի զործ չի առաջ գնում. երեք զաթէն  
ու մի բաղը ում էլ տաս, քեզ համար զործ  
կը զտնի:

Օսէփի պարկի բերանը դեռ բաց չէր արել,  
զարմացաւ, թէ ծերունին սրտեղից զիտէ որ ինքը  
երեք զաթա ու մի բագ ունի: Մնաց ապշած  
նրա ձիւնափայլ մորտեքին նայելիս: Բաղմանն  
ու չոբանն էլ զող կատուի պէս աչքների տա-  
կով ծերունու վրայ ծկրակում էին ու իրար  
ստում.

— Խախտառակ կը լինենք, եթէ ոս իմա-  
նայ, որ մեր տոպարակներում համեղ ուտելիք  
ունենք ու իրանից լինալում ենք:

Օսէփի տոպարակից հանեց մի զաթի հետ  
բաղի կողքը և ծերունու առաջ դարսելով ասաւ.

— Համեցէք, բարի, վայելիր, քեզ պէս աղ-  
քատին սոված թողիլը խղճի զէմ բան է. ինչ  
անենք, որ մէջտեղը ես եմ վնասում: Աստծու  
ծերն ես, քեզ կերակրած՝ Աստծուն կերակրած,  
միւնոյն է: Յոյս ունիմ, առանց ընծայ տանե-  
լու էլ զործ գտնեմ: Եթէ չգտնեմ էլ, մեծ ցաւ  
չի. ջահել, առողջ տղայ եմ, ամեն նեղոթեան  
կը դիմանամ, իսկ զու ծեր ես ու հիւանդու:

Ծերունին սկսեց մեծ ախորժակով ուտել  
իւղալի զաթէն ու փափուկ միսը. վերջացնելուց  
ետք տեղից կամաց կանգնեց: Ճամբէն շարու-  
նակելոց առաջ դարձաւ Օսէփին ասաւ:

— Ա! որդի, զու որ քու փոքր տեղով ինձ  
պէս աղքատ ծերունուն սիրով ընդունեցիր ու  
լիուլի կերակրեցիր, ինձ պէս ծերանաս ու մու-  
րաղով կըշտանաս. Աստծու աչքը միշտ քեզ  
վրայ քաղցր մնայ, օրհնեալ ես մօրիցդ, օրհ-  
նեալ լինիս և ինձանից:



Այսպէս զոհութիւն արաւ ծերունին, օրհ-  
նեց բարեսիրտ Օսէփին և ուզում էր աղբիւրի  
մօտից հեռանալ. չոբանը առաջ եկաւ ու մա-

Հակը կղակին դէմ տալով խօսեց աչքերը  
ճպճպացնելով.

— Բարի, բաշխիր, չկարացինք լաւ պատիւ տալ: Մի բան էլ ես եմ ուզում հարցնել, տեսնում եմ, իմաստուն մարդ ես: Ասա ինձ, Աստուած ինչ է մտածել, որ դարտակ քարերը ստեղծել է ու այս սարի լանջերին փռել: Առաւել լաւ չէր անիլ՝ պիտանի բարներ ստեղծէր:

— Ա! որդի, պատասխանեց ծերը, զբանք էլ իրանց հարկաւորութիւնն ունին. Աստուած աշխարհիս վրայ անշահ, աննպատակ մի ծեղ ստեղծում:

— Ճատ կարելի է քու ասածը լինի, բարի, բայց աւելի լաւ չէր անիլ Աստուած, որ լանջերի վրայ այնքան քարերի տեղ ոչխար ու տաւար ստեղծէր: Տիսնում ես, երեքս էլ ջահել, անփող մարդիկ ենք. ոչխարի կաթը կը կթէ-լինք, բուրդը կը խուզէլինք, միսը կուտէլինք, վայելչութիւն կը քաշէլինք, մեզանից խեղճին, կարօտեալին էլ օգնութիւն կը հասնէլինք: Թէ չէ, քեզ եմ ասում, բարի, այսպէս բան կը լինի, որ Աստուած աշխարհը ինձպէս չքաւորներով է լցրել, սարի լանջերն էլ քարերով: Ի՞նչ առել կուզի, որ ձեռս կարձ կը լինի, շատ էլ ուզենամ խեղճերին օդնել, չեմ կարող:

— Սիրուն փափագներ ունիս սրտումդ, այ

որդի, ասաւ ծերունին, Աստուած ալդպիտի փափագները սրտերի մէջ տեղաւորելոց եոթ շատ անգամ գործով կատարում էլ է. բայց մարդիկն են, որ ապերախտ են գտնուում նրա շնորքի դէմ:


— Բարի, ուրիշների մեղքը ինչո՞ւ է Աստուած ինձանից պահանջում: Ես ու իմ ընկերը ինչ մեղաւոր ենք, որ ուրիշները նրա ողորմածութիւնը, շնորքը չեն հատկացել. թո՞ղ մեր սրտի ուզածը Աստուած տայ ու փորձի. տեսնի, արժանի ենք, թէ չէ:

— Ուրիշներն էլ քանի որ չքաւոր են եղել, որդի, քեզ պէս են խօսեցել. հէնց որ հարստացել են, էլ ոչ Աստուած են մտարերել, ոչ աղքատ: Աստուած իմաստուն է, նա վորքը բաներով էլ է մարդու սիրտով ճանաչում:

— Զուր տեղը հոգուդ վրայ մեղք ես բարձում, բարի: Մենք ինչ ունինք, որ ինչ իրնայնք մարդոց. Աստուած երբ մեզ բարութեան արժանացըց ու նրա փոխարէն ապերախտութիւն տեսաւ:

Դերունին աչքերը խէթելով չորանի վրայ խօսեց:

— Թու քո աչքերի, ոտների, ձեռների համար երբ ես Աստծոն փող վճարել. ձրի չես սոտացել ալդ առողջութիւնն ու երիտասարդութիւնը, որոնցից ես այժմ զրկուած եմ: Թրա-



պէս էլ մեծ ապերախտութիւն, որ բանի տեղ  
չես դնում Աստծու մեծամեծ բարիքները. աշ-  
խարհի որ հարստութեան հետ կարելի է փոխել  
առողջութիւնը, աչքը, ականջը, խօսելու շնորքը  
և այլն: Տես, որքան միամիտն ես, որ Աստծու  
դէմ տրտնջում ես, թէ ինչու քեզ տաւար ու  
ոչխար չի տալիս, որ դու նրանցով վայելչու-  
թիւն քաշես, արթշին էլ բաժին հանես: Ու-  
զածդ մեծ բան չէ Տիրոջ ձեռին. որ հրամայի,  
խորոն կը լինի, բայց զգուշութիւն է հարկա-  
ւոր. տուող Աստուածը կարող է խղել էլ:

— Յօժար եմ, բարի, տաւ չորանը, երբ  
ուզում է թնդ տայ Աստուած ու փորձի:

Գերունին այս լսելուց ետք երկար չմնաց,  
զաւազանի օգնութիւնով ոտները կամաց փո-  
խելով գնաց զլիսավէր ու քարերի արանքում  
շուտ աներեւութացաւ:

Օսէփն ու ընկերները հայի կրծոնքը թափ  
տուին, տոսպրակները շալակներն առան, մօտե-  
ցան վերջին անգամ աղբիւրից ջուր խմեցին,  
ողեցին ճամբալ ընկնել. յանկարծ նրանց  
ականչները ձախն ու ձունով բունուեցին: Ետնա-  
յեցին. ինչ տեսնեն, որ զարմանան, սարի լան-  
ջերը հօտ ու նախրով լցուած, ոչխարի մայոցով,  
տաւարի բառանցով ձորերը դրսմբում են:

Բաղմանն ու չորանը զարմացան, անկմանկ  
եղան. դէս ու դէն աչք ածեցին, տեսան, ոչ  
հայիւ կայ, ոչ նախրապան:

Օսէփը ուշ չզարձրեց այդ ձախներին, ու-  
զեց ճամբէն շարտնակիւ. չորանը նրա առաջը  
կտրեց.

— Այ ընկեր, չէ՞ որ մեր պայմանն այն-  
պէս է, որ վաստակածը հաւասար մասն անենք,  
էլ մւր ես զնում. չ՞ս տեսնամ, որ Աստուած  
սարերը հօտերով ու նախրով լցրել է: Կաց  
միասին կառավարենք, օրական մինը մորթենք,  
սառ աղբիւրի գլխին վայելենք ու Տէրին փառք  
տանք:

Օսէփը պատասխանեց.

— Ուզիղ ես ասում, իմ սպայմանն այնպէս  
է, որ իրար հետ վաստակածը հաւասար բաժին  
անենք. բայց այս ոչխարն ու տաւարը վաս-  
տակ չի, զամած է: Քու սրտի վափագը այդ  
էր, Աստուած կատարեց, դրա մէջ ես մաս  
չունեմ: Աստծու կարողութիւնը գրանով հօ-  
չըլերջացաւ. եթէ արժանի եմ, ինձ էլ մի  
բան կը տայ: Ճատ կարելի է, ընկերոյ յօժար է  
մնալու, ես հակառակ չեմ, թող մնայ, երկսով  
վայելեցէք:

— Զէ, չէ, ես էլ չեմ ուզում, վրայ բերեց  
բաղմանը, դրան այդքան բաժին տուող Աս-

տուածը ինձ մտահան չի անիլ: Ես քեզ հետ  
եմ դալիս, Օսէփ, գնանք:

— Գուշ գիտէք, գնացէք, ասաւ չորանը,  
ձեր օգտի համար եմ ասում, թէ չէ աւել կտորը  
փառ չի ծակիլ. մենակ ես էլ կը կառավարմ  
այս ապրանքը:

Այս ասելով չորանը ձեռի մահակը հպար-  
տօրէն տսին դրաւ ու բարձրագոչ «կը՝ ո.ո. —  
հէ!» անելով սարն ի վեր դնաց:

## Զ

Օսէփն ու ընկերը անթիւ սպրանքը թո-  
ղելով մի մարդի յուսով բռնած ճամբար զնա-  
ցին: Առաջները այլ ես ոչ ամայի տափեր կա-  
ցին, ոչ քարքարուտ սարեր. ճամբի աջ ու ձախ  
վուած էին կանաչ դրախտանման զաշտեր՝  
զարդարուած ծառերով, ծաղկներով; Արդ սիզա-  
ւէտ խոտերի մէջ մտնողը որոից չէր տալիս,  
որ դուրս գտյ:

Օսէփն ու բաղմանը հասան մի թանձը  
անտառի զլուխ. շատ զուրեկան տեղ էր: Հան-  
դիստ առան մի աղբիւրի վրայ, որ հաց տառն: Կանաչազարդ թմբի վրայ տոպրակները վէր դրին,  
պաշարները հանեցին, սկսան ծնուները բան  
զցել: Առաջնը Օսէփը խոսք վէր բերեց.

— Տեսա՞ր, մեր ընկերն առանց նեղութիւն

քաշելու ինչպէս միանգամից հարստութեան տէր  
զարձաւ: Արժան է, որ նա այդ բարիքից ամեն  
մի անցորդի բաժին տալ, լիացնից նոով ճամ-  
բայ դնի: Աստուած էլ այն ժամանակ քաղցր  
մտիկ կը տալ նրան:

— Ի՞նչ ես ասում, Օսէփ, բանըդ հատել է,  
հեղնելով խօսեց բաղմանը. թէ խաչն իմն է,  
զօրութիւնը ես դիտեմ: Զտը ես մտածում, նա  
որդ բանն անողը չի, թէ կուզ եօթն այդքան  
բարիք սատալի: Ինչքան ճանաչում եմ, նա  
ոքինի ողորմող պատող չի: Ֆեղն ինչ է, ծեղ  
չի տալ, որ մարդ աչքը կոխի: Աստուած բարիքն  
ինձ պէտք է տալ, որ ամեն օտարականի լիա-  
ցնեմ. աղքատներին, տկար ծերերին սիրեմ,  
պաշտեմ հոգուս պէս: Ճատ էլ հիմի սիրսա  
բարերարութիւն անել է ուզում, որ ճեռս ու  
ծոյս զարսակ է, ինչ անեմ:

— Ընկեր, հարցրեց Օսէփը, որտինդ ես  
ասում, թէ կեղծաւսրութիւն ես անում:

— Ի հարկէ սրտինս եմ ասում, կեղծաւս-  
րութեան ինչ բան ունիմ, պատասխաննեց բաղ-  
մանը ու աչքը անմեղ բարձրացրեց: Տեսաւ  
անտառի կողմից կաղի տալով մի ծերունի է  
զալիս. կերպարանքն առաւել սոսկալի, մարմինը  
կիսաբաց, հաղուստի կտորները կախ ընկած.  
ոտք, զլուխ վէրքերով պատած, զաւազանի

վրայ թեքուել է, հաղիւ է կարում ստը փոխել:  
Ճերմակ միլուքն է բամբակի պէս երեխն տալիս:  
Բաղմանը ալլակերպ ծերին տեսաւ ու չկարաց  
համբերել, քիթը կուչ ածելով մտքումն ասաւ.

— Պի կարգին մարդը կտրուել է, շարտ-  
նակ խոյսոտ ծերերն են լոյս ընկնում ու մարդու-  
ախորժակը կապում:

Այն ինչ Օսէփին էր, ծերանի աղքատին  
տեսնելով առաջը վազեց, կրնաստակից բռնեց,  
որ վէր չընկնի. բերառ իւր պարկի մօտ: Հաղի  
չուխէն հանեց, տակը փոեց, նստացրեց.

— Բարի լինի գալրդ, բարի, այս հալին  
ինչ ես ման գալիս անտառների մէջ:

— Ի՞նչ անեմ, խօսեց ծերունին հառաջելով,  
ծերացել եմ, անպիտանացել. որտով ուզում եմ  
աշխատել, բաց չեմ կալում: Առ ժամանակ  
դռներին մուր էի անսում, զլուխս սպահում.  
Երկար չքաշեց, ժողովրդի աչքից ընկայ վէրքե-  
րիս պատճառով, ամենն էլ զգուեցին և բնակու-  
թինից դուրս արին: Ճարս կտրած ապրում եմ  
անտառների մէջ անտէր, անտիրական: Այս  
աղբուրի վրայ երբեմն ճամբորդներ են հանդստա-  
նում, գալիս եմ ողորմութիւն խնդրում:

Այս որ լսեց բաղմանը բարձրաձայն խօսեց.

— Հա, ինչու չէ, Օսէփի, կարելի է ողոր-

մութիւն տալ, արի ամեն մինս մեր ունեցածից  
բաժին տանք:

Այս ասելով տոպրակը ձեռնահարեց բաղ-  
մանը, փափուկ հացն ու միսը թաքցրեց,  
հացի ու պանրի կտորտանքները հաւաքելով բե-  
րաւ ծերունու առաջ զրաւ.

— Կեր, բարի, շատ համով է:

— Ֆերունին նայեց բաղմանի աչքերին ու  
ասաւ:

— Ճնորհակալ եմ տուրքիցդ, որդի, Աստուած  
տեսնում է: Աղի պանիրը վէրքերիս վնաս է,  
կը մրմնջան:

Օսէփը տոպրակին մօտեցաւ, երկրորդ  
զալթէն ու բաղի անդամը (աղղը) բերաւ, զրաւ  
ծերունու առաջ.

— Այ որդի, այս չափը որ ինձ ես տալիս,  
էլ տեղն ինչ է մնում, որ ընծայ տանես, խօ-  
սեց ծերունին:

— Քեզ տուածն աւելի վարձք է, բարի,  
կեր, լիացիր. կարելի է քու պատճառով Աս-  
տուած մեզ մտաբերի:

Ֆերունին զլուխը կախած ախորժակով  
կերաւ զալթէն ու միսը և ոտի կանգնելով օրհ-  
նեց Օսէփին.

— Արդի, զու որ ինձպէս թշուառ ծերին  
ախորժով սիրով ընդունեցիր ու կերակրեցիր,

սրտագէտ Աստուածը քեղ օրհնի, արածիդ  
փոխարէն հարիւրապատիկ հասցնի:

**Է.**

Գաւազանի վրայ ծերտնին կրացած  
ուզում էր աղբւրի կշախ հեռանալ, բաղմանը  
առաջ եկաւ, հարցրեց.

—Բարի, սպասիր, մի բան եմ ասելու: Դու  
այսքան ծերացել ես, աշխարհում շատ բան  
տեսել. ինձ հասկացըն թէ՝ Աստուած մաքումն  
ինչ է ունեցել, որ այս հիանալի տեղեկում  
այսքան անպէտք ծառեր ու խոտեր է ստեղծել:  
Ինչի են պէտք այս թանձր անտառները,  
երբ արտեղ ասպող մարդիկ չկան, որ ծառերը  
կտրտեն, զերան շինեն կամ տուն տաքացնեն:  
Մենակ գաղաններին պատրապարելու համար  
արժէր, որ Աստուած այսքան անտառներ է  
տնկուել:

—Ա! որդի, խօսեց ծերունին թուլաձայն,  
դրա ստեղծողը ինձ ու քեզանից շատ խմասուն  
է. նա ամեն բանի լաւն է լմանում, կարելի է  
անտառը ուրիշ բանի համար հարկաւոր է, որ  
ստեղծել է:

—Զէ, բարի, ինչ ուզում ես, ասա, բայց  
իմ զիտալով՝ աւելի լաւ էր, այսպէս տեղերը  
պողառու ծառերով, անուշ-անուշ մըգերով

ծածկուած լինէին: Եթէ ես Աստուած լինէի,  
այս անտառները այգիներ կը շինէի, որ անց-  
նող, զարձող մարդիկ ծառերի շուաքում նըս-  
տէին, այգու բերքը, պոուղը վայելելով Տէրին  
փառք տալին:

—Ուզելիքդ Տիրոջ ձեռին դժուար բան  
չի, կարող է մի խօսքով այստեղ պտղատու  
ծառեր էլ բացնել, խաղող էլ. բայց որ մարդիկ  
ստացած շնորքներին մեծ մասով անարժան են  
դուրս գալիս, որան ինչ կատա, այ որդի:

—Ուրիշների հետ ինչ գործ ունիմ, բարի,  
Աստուած բարիքն ինձ պէտք է տայ, որ տես-  
նի թէ՝ ինչ տեսակ եմ կատարուծ խոսուում:

—Անկարելի բան չի, որդի, կը տայ, բայց  
տալուց ետք կը փորձի. զզոշացիր, եթէ ապե-  
րախս դուրս գաս, տուածը կը խլի:

—Հա, թնդ խլի, եթէ ապերախս լինիմ,  
առաւ բաղմանը:

Դեռ խօսքը նրա բերանում ծերունին կա-  
զի տալով դէպի անտառը դնաց ու մի քանի  
բազէ չքաշած ծառուտի մէջ ծածկուեց: Մի  
թեթև քամի խաղաց, տերեւները իրարացով  
տուաւ: Օսէփն ու բաղմանը զլուխները բարձ-  
րացրին.—Ինչ տեսած լինին, որ լու լինի: Ահա-  
գին անտառը երկար ու մէկ այգի զարձած,  
մըգերը ծառերի վրայ կարմրին են տալիս, հա-

սուն սե ու սիպտակ խաղողները վազների վրայ ժպտում են, քաղող, ուսող կանչում; Բաղմանը որախացաւ այս ամենը տեսնելով, դարձաւ ցընծալով Օսէփին ասաւ:

—Ա! բաղդ, այ վայելութիւն. Էլ ուր ենք հեռու տեղ գնում, որ փող վաստակենք. նոր նրանով կալուածք առնենք կամ շինհնքք: Ահա, ամեն բան պատրաստ է, արի նստենք այս այդու մէջը, կեանք քաշենք:

—Զէ, ընկեր, պատասխանեց Օսէփը, իմ պարմանը արդպէս չի, ես աշխատանքը իմ քըրտինքով պէտք է ճարեմ: Այդ արդին քու ոզգածն է, Աստուած քու խնդիրը լսեց, աշխարհի բարիքներից քեզ բաժին հանեց: Դրաւ մէջ ես մաս չունեմ. քեզ հանալ, ինչպէս կուզես, այնպէս վայելիր:

**Պ.**

Այս ասաւ Օսէփը, թողեց բաղմանին ու մենակ ճամբէն բոնեց, գնաց: Սար ու ձոր ոտի տակ տալուց ետք դէմ առաւ մի քաղաքի: Ռւտելու պաշար չունէր, տոպլակի մէջ մնացել էին երրորդ գալթէն ու բաղի մոխց մի կոտր: Խիստ սոված էր. չէր գիտում այդ մնացածն ինքն ուտի՞, թէ ընծայ տանի: Մտամզոր կանգնած մտածում էր.

—Տէր Աստուած, ես օտար, այս քաղաքի մարդիկն ինձ անծանօթ: ով կիմանայ, թէ ես արզար խղճի տէր եմ: Հասակիս որ նայեն, մարդագառեղ չեն դնիլ և զործ տալ: Ես ոնց իմանամ, թէ քաղաքի մէջ ով է բարեսիրս մարդը, որ գնամ նրա փէշը բոնեմ, շնորք սովորեմ ու վերջը մի կոտր հաց գտնեմ: Վայ թէ արդպէս մարդ չեղաւ, մի քանի օր պարապ մնացի, ետու ինչ անեմ, ով ինձ հաց կը տայ: Զեռ մեկնել, ողարմտթիւն ուզել չեմ կարող, ինչ կուղէ լինիր:

Օսէփը մնացել էր անծանօթ քաղաքին տիստը նայելիս, սիրտ չէր անում գնալ առաջ: Այդ վագիկնելին էր, որ յանկարծ մի ճախն ընկալ նրա ականջով.

—Ա! որդի, ինչ ես կանգնել մտածում:

Օսէփը ետ գարձաւ, տեսաւ մօտիկ մի ծերունի կանգնած: Հասակը բարձր, միրուքը ձիւնափալլ, շորերը պատառոտուած ու հաստ թելերով իրարից կպցրած. մազերը ցաքուցրիւ և ամբողջ մարմինը բորսու: Սրան որ տեսաւ Օսէփը, մտքումն ասաւ. «Փառք քեզ, Աստուած, ինձանից աւելի թշուառը կայ, իմ զիութիւնն այնքան էլ ողալի չէ»: Իւր վիշտը մտացաւ, դարձաւ ծերունու ցաւը հարցրեց.

— Ինչով կարող եմ քու սիրտը շահել,  
բարի, ասա, ի սէր Աստծու:

— Ա! որդի, զու էլ ինձ նման աղքատ ես,  
ինչ տնես, ինչով սիրտս շահես: Խիստ քաղցած  
եմ, թէ տոպրակումդ պաշար տևիս, տուր  
տտեմ, արևդ օրհնեմ:

Օսէփը մոռացաւ խր քաղցը, խկոյն և եթ  
տոպրակից հանեց գաթէն ու միար և առաջար-  
կելով ասաւ.

— Աս, բարի, անուշ արա:

— Քեզ բաժին չմնաց, որդի, հապա դու:

— Քեզ աւելի է արժան, բարի, զու կեր,  
կառավարուիր, Աստուած մի տեղից էլ ինձ կը  
հացնի:

Դերունին տափակ քարի վրայ նառեց,  
հացն ու միաը անխօս կերաւ ու գարձաւ Օսէ-  
փին ասաւ.

— Երբ որ զու քեզ քաղցած թողիր,  
ինձ կերակրեցիր, զիա տեղը ես քեզ ծառալու-  
թիւն կանեմ: Քու սրտի ցաւն ինձ յայտնի է,  
մի բարեմիտ մարդ ես տղում, նրա մօտ մտնես.  
շնորք սովորես, հաց վաստակես: Արդպիտի  
մարդու տեղ ես զիտեմ. այսուղից որ կը լուսնես  
քաղցք, աչ թէկիտ վրայ շինութիւն կը գայ:  
Ճէնքի տէրը բարեսիրտ մարդ է, ձեռին ահա-  
դին զործ ունի, շատ մշակներ են բանում. նրան

քեզ պէս մի հաւատարիմ, աչքաբաց տղայ է  
հարկաւոր: Նա քեզ կընդունի անպատճառ.  
բայց խոստացիր, եթէ պաշտօն զտնես, ինձ  
չմոռանաս. պահող-պահանող չունիմ, անտէր,  
անսիրական ծերունի եմ:

— Աչքիս վրայ, բարի, ինչո՞ւ կըմտանամ,  
հէնց իմանանք՝ հայր ես: Անքան աղօթիր,  
որ ինձ զործ տան, քեզ զլիսիս վրայ կը պահեմ:

Օսէփը ծերունուն թողեց, որ գաւաղանի  
վրայ զիմհար տուած մնայ, ինքը վատահ, յու-  
սով զիմեց զէպի քաղաք: Հեշտոթիւնով դտաւ  
ծերունու ասած շէնքը. տէրը դրանը կանգ-  
նած էր. Օսէփի տեսքին ու կապախն նախելով  
ձայն տուաւ.

— Ա! զիւղացի տղայ, ինձ մօտ զործի չես  
մտնիլ:

— Ինչո՞ւ չէ, տէր. իմ տղածն էլ այդ է,  
պատախանեց Օսէփը:

— Քեզ զարդնա (բացի) օրավարձը՝ օթեան  
էլ կը տամ, որ բնակուես:

Օսէփին այս լսելով իրան այնպէս բաղդա-  
ւոր էր համարում, կարծես ողջ աշխարհի տէր:  
«Ի՞նչ լաւ մարդ է եղել, ասաւ ինքն իրան,  
համ օրավարձ է տալիս, համ օթեան. այս  
լաւ եղաւ, իսեղձ ծերունուն էլ կը բերեմ, մօտ

կը պահեմ»: Այս մտածելով զդակը վերցրած  
մօտեցաւ տանտիրոջ:

— Ողբամած տէր, Հօ չես բարկանալ, եթէ  
մի բան ինզըրեմ:

— Ասա մի վախիլ, ինչ բան է, որտով ասա:  
— Ես մի ծերունի հայր տնիմ, հիւանդ է,  
եթէ նեղոթիւն չի լինիլ, իրաւոնք տաս,  
բերեմ մօտո պահեմ:

— Ինչո՞ւ չէ, բարի տղայ, աւելի տրախ  
կը լինեմ, բեր, պահիր: Զօրանաս, որ ծերունի  
հօրդ չես մոռանում:

Օսէփը եթէ երկու ոտն տնէր, երկուն էլ  
փոխ առաւ ու վագելով հասաւ ծերունու մօտ,  
տեսաւ քարի վրայ նստած.

— Բարի, բացականչեց նա, Աստուած քեզ  
բարի տայ, մրտեղից որ տեղ ինձ պստահեցիր,  
համ իմ բանը աշողուեց, համ քոնր. վեր կաց,  
դնանք:

### Թռա.

Օսէփն ու ծերաւնին մտան քաղաք. տան-  
տէրը նրանց քաղցր ընդունեց և օթևանը ցոյց  
տուաւ: Օսէփն այնտեղ ծերունուն տեղաւորեց  
ու ինքը գործի կացաւ, Առաջ մկնեց հասարակ  
մշակի տեղ բանել. տէրը տեսաւ, որ շնորփով  
է, վարպետի մօտ կանգնացրեց, որ որմնադրու-

թիւն սովորի: Ճէնքը մեծ էր, մինչեւ աւար-  
տելը բաւական ժամանակ քաշեց: Օսէփը  
ամենից շուտ գործի էր գնում, ամենից ուշ վե-  
րագրառում իւր օթևանը. ուշք ու միտքը  
արհեստի մէջն էր. թէ տէրը և թէ վարպետը  
սիրում ու պատում էին նրան: Իրիկունը զա-  
րուն պէս ծերունուն կերակրում էր, վերքերը  
լուանում, փաթաթում:

Անցաւ ամիս, անցաւ տարի, Օսէփը ար-  
հեստի մէջ վարժուեց, շինութիւնը աւարտուե-  
լուն մօտեցաւ: Օսէփի օրավարձերը բաւական  
գումար էին անում, ստացաւ տանտիրոջից, ու-  
րիշ օթևան վարձեց, սկսեց զեղ ու դարմանի  
ետնից կենալ, որ անպատճառ ծերունու բորն  
ու վերքերը առողջացնի: Էլ բժիշկ չմնաց, որ  
խորհուրդ չհարցնի, էլ զեղ չմնաց, որ փող  
չտայ առնի: Բայց ամենն էլ գուր, վերքերը  
նոյնը մնացին. նեղութիւնով վաստակած փողը՝  
ամենն էլ ծախսուեց: Օսէփը մնաց ծերունու  
կողքին նստած մտածելիս. չէր իմանում, ինչ-  
պէս վարուի, որ շարունակի իւր վաստակով  
ծերունուն պահել: Եթէ թողէր նրան մենակ,  
ինքը գործի գնար, ով կը հետևէր նրան: Առաջ  
օթևանն ու գործի տեղը մի քանի քայլ  
էին իրարից հեռու. հիմի գործ ճարելու հա-  
մար քաղաքի հրապարակը պէտք է դնար:

Փողը հատած օրը Օսէփիը նստած էր տխուր,  
չէր զիտում, ինչով կերակրի ծերունուն, յան-  
կարծ դուռը բաց եղաւ ու բարի տանտիրոջ  
ծառան ճաշ բերաւ։ Օսէփի զարմանքից երեսին  
խաչ հանեց ու մտքումն առաւ։ «Հրեշտակը հօ-  
չդնաց, իմաց արաւ. տանտէրը որտեղից իմա-  
ցաւ, թէ այսօր իմ վողը հատել է ու բարին  
ուտելու բան չունի»։

Ճաշը դրաւ ծերունու առաջ, նրա ախոր-  
ժակը չկոտրելու. համար ինքն էլ սկսեց մի կող-  
մից ծղծղալ։ Բայց որովհետև ուրիշի վաստակն  
էր, հէնց գիտում էր, թէ հացի կտարները  
սրտի մէջ շարում էին։ Գերունին իբր միա-  
միտ՝ հարցրեց Օսէփին.

— Ինչո՞ւ տխուր ես երեսում այսօր, որդի։

— Բարի, դու ամեն բանի պատճառը լաւ  
ես իմանում, էլ ես ինչ առեմ։

— Ես հօ Աստուած չեմ, որ մարդկանց  
սրտի մէջը գիտամ։ Ճատ, շատ, մօտիկ գողը  
պէտք է հատած լինի. էլ դրա համար ինչո՞ւ  
ես տիրում։ Հօ կեանքդ, առողջութիւնդ, երի-  
տասարդութիւնդ իրանց տեղն են։

— Ես էլ հէնց նրա համար իմ սրտակո-  
տոր, բարի, թէ ինչո՞ւ ինձպէս առողջ, չահել  
մարդը անվաստակ մնալ, ուրիշի հացն ուտի։

— Հաղա ինչ ես ուզում անել, որդի։

— Ուզում եմ զործի դնալ, բարի, բայց  
չեմ զիտում, քեզ ում լուսով թողեմ ցերեկը,  
որ զործի գնամ և իրիկոնը ապրուատ բերեմ։

— Եթէ այդ է տխրութեանդ պատճառը,  
անհոդ կաց, խոնարհ Օսէփ, հէնց առաւօտն  
և եթ վերկաց, զործի գնա։ Մեպհական ձեռովլ  
աշխատած հացը շատ քաղցր է. երանի թէ  
ուժս ինձ ետ գար, վերքերս թողէին, ես էլ  
աշխատէի. այս ու վախւ. . .

— Բարի ջան, ուրախասութրու խոսեց Օսէփը,  
հօր ու որդու հացը ով է ջոկամ։ Միթէ ես  
քեզ համար չեմ վաստակում։

— Ապրիս Օսէփ, խոսեց ծերունին արտա-  
սուքը սրբելով. Աստուած տեսնում է մաքուր  
սիրող, դրա համեմատ էլ քեզ կը տայ։

## Ժ.

Հետեւեալ առաւօտը Օսէփը կանուխ իջաւ  
քաղաքի հրապարակը, այսաւեղ ժողովուած էին  
հարլիրասոր մշակներ, զործակալներ։ Բանատէ-  
րերն իրանց զործերը յանձնում էին զործա-  
կալներին. սրանք էլ վարպետներ, մշակներ է-  
ին վարձում 10-ով, 20-ով։ Ամենավերջը մնա-  
ցել էին մի քանի կադ, անշնորք արարածներ,  
նրանք էլ կիսագնի վարձուելով գնացին զոր-  
ծի։ Օսէփը հռչակուած էր իրրեւ ընտիր որմ-  
2

նաղիր. Հրապարակի մէջ սպասում էր, նրան  
ոքմին մօտեցող, հարցնող չեղաւ. ոչ վար-  
պետի տեղ փորձեցին, ոչ մշակի: Չէր զի-  
տում, պատճառն ինչ է: Մտածում էր,  
թէ ինչ անի, որ իրիկունը հացի զին տանի  
ծերունու համար: Յերեկով չէր ուզում տուն  
գառնալ, ամաջում էր: Դառնար էլ, ծերունուն  
ինչ ասէր: Վճռեց մինչև լրիկու անդործ շըր-  
ջել փողոցներում, ետով մթանը զնալ տուն:  
Այսպէս էլ արեց. ձեռները զրպանում դրած  
փողոցէ փողոց թափառեց մինչև հասաւ. քա-  
զաքի լայն հրապարակի: Այդուղ նա հանգի-  
պեց մեծ բազմութեան, որ տխուր տրտում դա-  
լիս էր ժամի, եկեղեցու կողմից: Մեծամեծ մար-  
դիկ էին սղաւորները, ինչպէս երեւում էր նը-  
րանց հաղուստներից: Տղամարդիկանց հետ խա-  
ռըն էին և կնանիք, ամենն էլ արտասուք է-  
լին չափաւմ: Այս բանը որ տեսաւ Օուկիք, գար-  
մացաւ, հետաքրքրուելով մօտեցաւ մի մարդու,  
հարցրեց.

— Այս ինչ բան է, ինչու են լալիս, ոկ-  
քեր են սրանք:

— Դու մըտեղացի ես, հարցրեց այն մար-  
դը, որ տեղեկութիւն չունիս պատահած փոր-  
ձանքի մասին: Այս լաց եղողներից մինը մեր

թագաւորն է, միւսը թագուհին, մէկէլներն էլ  
պալատականները, ազգականները:

— Հապաւ սրանց ցաւն ինչ է, որ ախտէս  
լաց են լինում:

— Սրանց ցաւը, օտար եղբայր, մի ան-  
տանեկի բան է: Թագաւորը մինումար որդի  
տնէր. երբ եկաւ, հասակն առաւ, հայրը բե-  
րաւ նշանեց մի շատ սիրուն, անսման աղջկայ  
հետ: Աղջիկը հասարակ մարդի գուստը էր, բայց  
այնպէս սիրուն, այնպէս վայրիւան, կասես լու-  
սի կտոր. դրա համար էլ անունը Ճողիկ էին  
դրել: Նշանորէքից ետք երկար չքաշեց, հար-  
սանիքի պատրաստութիւն տեսան: Մեր աշ-  
խարհի սովորութեան համեմատ հարսնացուն և  
փեսացուն մեծ բազմութիւնով շրջապատուած  
եկան պակուելու: Ժամի մէջ բոլոր կարգն ու  
արարողութիւնը աւարտուեց, ներկայ եղողները  
շնորհաւորեցին թագաւորին, թագուհուն: Հարս-  
նառ, մակառ, ամենը զուրս եկան, սպասում  
էին ժամի զուանը, որ նորապակները իւազ, ա-  
ւետարան համբուրեն, լոյս աշխարհ գուրս զան:  
Դիրանք եկել էին շէմքին մօտեցել. մէկ էլ այն  
տեսան՝ ժամի դուռն ու լուսամուտը քարով  
շարուեց: Հարսն ու փեսան մնացին խաւարած  
ժամի մէջ: Տեսնողները մեղք եկան ջահէլ նո-  
նապակներին ու լաց եղան: Որն ուզեց զնալ

բահ ու քլունգ բերի, ժամի պատր ծակի, որն  
էլ խորհուրդ տուաւ զերաններ բերել, պատերը  
կործանել: Փողալուրդը յօժար չէր ժամի քան-  
դելուն, մի քանիսն էլ տառւմ էին, եթէ պա-  
տերը քանդենք «բոճք» խմելով, հարս ու փե-  
սան քարերի տակ կը մնան: Թաղաւորն ինքը  
աւելի էր վախենում. որդու պատճառով չէր  
համարձակւում Աստծու տանը զիսչել, չինի  
թէ տաւել բարկացնի ու ողջ աշխարհի խոր-  
տակման պատճառ գառնայ, Երեք օր է այդ  
փորձանքը պատահել է ու ճար չի գտնում:  
Օրենք երկու անգամ թաղաւորն ու թաղուհին  
դալիս են ժամի կշտով պատռում ու արտասունք  
չափելով ետ դառնում: Զեն զիստում ինչ անեն:  
Օսէփն այս պատճութիւնը օր լսեց, ինքն  
իրան ատաւ.

—Քեզանից էլ մեծ վիշտ ունեցող է եղել,  
Օսէփն, ինչ ես սեւալուել, Աստծուն ողորմած է.  
Համբերիլ:

Այսիւ խոսելով Օսէփն թեքուեց քաղա-  
քի հին թաղը և թափառեց խուլ փողացնե-  
րում: Տեսաւ մի հին եկեղեցի. կտորը ծակձր-  
կուտ, պատերը կիսաքանդ, մէջը աղբով, կեղ-  
տով լիքը. «աս էլ Աստծու տաճար է եղել,  
ինքն իրան տասց Օսէփը. ամեն օր մարմնի  
համար եմ աշխատում, այսօր էլ հողու համար

աշխատեմ, վարձքը վարձք է: Պօտիկ տանից  
դնաց բահ, աւել, պարկ խնդրեց, բերաւ ժամի  
աղբը սրբեց, զէն ածեց: Մինչեւ իրիկու այդ-  
տեղ մլուլ արաւ ու մժանը հանգիստ խղճով  
գնաց տուն: Ֆերունին զիտէր, թէ Օսէփն օրը  
ինչպէս է մթնացրել, բայց չիմանալու դնելով  
հարցյրեց.

—Ի՞նչպէս ես, որդի, սիրող հանգստա-  
ցաւ. բանել էիր տգում:

Օսէփն ամաչեց, թէ զիխովն անցկացածը  
պատճի: Հետը հաց չէր բերել, կարծեց թէ ծե-  
րունին զրա համար է հարցնում, այսպէս պա-  
տասխանեց.

—Բարի ջան, մշակութիւն արի, օրավար-  
ձըն էզոց պէտք է տունամ:

—Քարդ մի անիլ, որդի, վարձդ չի կոր-  
չիլ, այսօր չեղաւ, էզոց կտանաս:

Օսէփը ծերունու այս խոռքերի վրայ հան-  
գարտուած մօտեցաւ, վէրքերի վաթաթանները  
փոխեց ու զեռ ձեռի գործը չկերջացրած խոր  
յոզոց քաշեց:

—Ի՞նչ է եղել քեզ, որդի, ինչու ես լողոց  
հանում, միթէ ինձ պահպանելուց ձանձրացել ես:

—Բարի, այդ ինչ ես ատաւ, խոնց Օսէ-  
փը սլտակուսով, միթէ Օսէփը քեզ պահելոց  
կը ձանձրանայ: Զէ, բարի, իմ տիսրութեան

պատճառը ուրիշ է: Սյոր քաղաքի հրապարակում այսպէս, այսպէս բան տեսայ, բարի, ժամի գուտն ու լուսամուտը քարով շարուել են, նորապատկ հարս ու փեսայ մնացել մէջը փակուած: Ժամի պատերը ոչ բահով քանդուելու են, ոչ բոմբով կործանելու: Թագաւորն ու թագուհին են նրանց տէրը, որոնք երեք օր է, ահազին բազմոթիւնով գալիս են ժամի զիսով պտտում ու արտասանք թափելով հեռանում: Աշմարիտ է ասած, բարի, «ուզոր մեծ է, մէջքի հարածն էլ է մեծ»: Թագաւորի մեծոթեան համեմատ Կատուած մեծ ցաւի է հանդիպեցրել: Մեղ պէս մեր ցաւն էլ պատիկ է:

### ԺԱ.

Թագաւորի զրոխն եկած փորձանքի մասին լսելուց ետք ծերունին Օսէփին ասաւ.

— Բայ ինչ էիր կարծում, որդի, ձեր զիւղում նստած կարծում էիր թէ քաղաքացիք ու քաղաքի թագաւորը ցաւ ու կրակ չունին:

Օսէփր մնաց զլուխը կախ արած:

— Ինչպէս երեւում է, շատ ես ցաւում նորապատկների համար, վրայ բերաւ ծերունին:

— Հայ, բարի, պատասխանեց Օսէփր զլուխը տխուր շարժելով. շատ մեղք ու կրակ բան է խաւար չորս պատի մէջ մնալլ:

— Եթէ այդպէս է, կուզես նրանց ազատելու հնար անեմ:

— Ո՞ւրէր, բարի ջան, խօսեց Օսէփր ալուսող աչքերով, եթէ այդպէս մի բան անէլիք:

— Լաւ, ասաւ ծերունին, քու սիրու համար այդ բանը կանեմ: Առաւոտը կը գնաս հրապարակ, երբ թագաւորը զայ, առաջ կը կանգնես, կասես. «Եթէ նորապատկներին ողջ առողջ ժամից հանեմ, ինչ կը տաս»: Դու քանի կարս դժուար պայման առաջարկիր, երբ կը նդունի, արի ինձ մօտ:

— Ճատ բարի, բարի, ասաւ Օսէփր ու առաւոտը կանուխ գնաց հրապարակ և աչքը զցեց թագաւորի զալուն: Ճատերը նրան դործի էին կանչում լաւ օրավարձ խոստանալով, բայց Օսէփր հակառակուել, ոչ ոքի երեսի չէր նայում. հէնց աչքը ժամի վրայ էր, թէ երբ պէտքէ թագաւորն երևաց: Ճաշին մօտիկ թագաւորն երևաց բազմութիւնով շրջապատուած: Օսէփր բազմութեան մէջը ճղելով համարձակ մօտեցաւ թագաւորին և ասաւ:

— Թագաւորը ողջ լինի, ես լսել եմ քու զլիխն եկած պատուհասը, ինչ կըտաս, որ զրանից ազատուելու հնար գտնեմ:

— Վէ տղայ, խօսեց թագաւորը, եթէ առանց ժամի շինութեան մի վնաս հասցնելու նորապատկներին ողջ հանես, ինչքան ոսկի ու արծաթ ուզեն՝ տամ:

— Այս, ողջ առողջ հանեմ, ժամն էլ անվնաս մնայ, միայն վարձը ուկի, արծաթ. չի լինելու, այլ իմ ուզածը:

— Թագաւորութեանս կէմն էլ ուզես, կըտամ, հնար գիտես, ազատիր որդուս. ես աշխարհի մէջ առակ դառայ, տիսոր կերպով խօսեց թագաւորը:

— Ուզածս տալու ես, թագաւոր:

— Տալու եմ:

— Հաստատ խօսք:

— Հաստատ:

— Երբ արդպէս է, քիչ համբերիր, ես դնամ ծերունի հօրս մօտ:

— Ոտով դնալ ուշ կը լինի, ասաւ թագաւորը, ահա իմ կառքը, նատիր, դնա:

— Փառք քեզ Աստուած, թագաւորի կառք էլ նատացրիր, ասաւ ինքն իրան Սոէփը ու արքալական կառքով ոլացաւ խը աղքատ բնակարանը:

### ԺԵՐ.

Ողջ քաղաքում ձախն ընկաւ, որ ժամի դուռը պէտք է բացուի. և այդ բաց անողն է մի հասարակ որմնադիր: Տներում շունչ ըրմնաց, ամենն էլ լցուեցին հրապարակը, ժամի կողքերը. անհամբեր սրտով սպառում էին որ տես-

նին, ինչ տեսակ զօրաւոր մարդ է բաց անողը:

Մէկ էլ տեսան զուռալէ արքալական կառքը եկաւ մի ծերունի մէջը նատած: Կերպարանքին ու կերպին նախղները զզուեցին ու սինչները վեր քաշեցին: Սոէփը իջաւ ու թէկոյ բունած մօտեցրեց թագաւորին: Թագաւորը խոր զլուխ տուաւ ծերունուն, ամենն էլ նրան հետեւեցին ու զլուխ վէր բերին: Գերունին թագաւորի ու ժողովրդի խոնարհութիւնը տեսնելով դատապանը ձախ ձեռն առաւ ու երեսը երկինք զյելով՝ աջ ձեռով ժամը խաչակնքեց: Քիչ զըլիսկախի մնալով էլլի երկինք նայեց ու հանդարտութիւնով խաչակնքելու կրկնեց: Ժողովուրդը սրտատրափ սպառում էր, թէ ինչ է լինելու սրա վերջը: Երբ երրորդ անգամ երկինք նայեց ու ժամը խաչակնքեց. մէկ էլ այնկարծ քարերի դուռն լեցին. տեսան փակ դուռն ու լուսամտուր բացուած: Ժողովուրդը ներս նայեց, տեսաւ հարս ու փեսալին ժամում անվնաս կանգնած, նրանք քոյլ ու եղբօր պէս կուները իրար ուսում պատ էին զցել: Գերունին մօտեցաւ. ձեռներից ըսնած բերաւ ծնողներին յանձնեց ողջ առողջ: Թագաւորին ու թագուհին նրանց համբուրեցին ու հրաման հանեցին որ զանձարանից ողորմութիւն բաժանուի աղքատներին ու բանտերում ըսնուածներին ազատութիւն տրուի:

Կանգնած մարդիկ մնացին ապշած բորոտ ծերունուն նայելիս. «սա ինչ մարդ է, որ ախ-պիսի հրաշք կտտարեց», ասում էին նրանք: Ճառերը մօտեցան և աջը համբարեցին. իսկ ծերունին դարձաւ ժողովով առաջ բարձրածախն թաղաւորին հարցրեց.

— Այս բազմոթեան առաջ ճշմարիտ խոս-տովանիր, թաղաւոր, ինչ սարսափելի յանցանք է զործուել քո ընտանիքի մէջ, որ Աստուած այս գէպքով կամեցաւ ձեղ իրատել, զգաստացներ:

Թագաւորը զլիխոց հանեց թաղը, միայնակ կանգնեց հրապարակի մէջ, հասարակ մարդի պէս մի առ մի խոստովանեց իւր արածները և վերջն աւելացրեց.

— Աստծուն է յախնի, որ ես ոչինչ ըր-թագցրի: Եթէ ես զործած յանցանքներից մինը ծածկեցի, ահա բոլոր ժողովարան արտեղ է, թող համարձակ բաց անի և ամաչեցնի: Այս բագէխս ոչ ոքի իրաւոնք չունիմ պատժելու, թագ չկայ զլիխու:

Այս ասեց թագաւորը և արտասուեց: Ժողո-վովի մէջ կարեկցութիւն գարթեց, ամենն էլ մեղքացին, այս ու այն կողմից գոչեցին.

— Մեր թագաւորի վրայ տրիշ յանցանք չենք իմանում, արգար խոստովանեց, արգար...

— Հաւատալի է, ինչպէս ասում էք, խօսեց

ծերունին, թագաւորն արդար է, այդ փորձան-քի մէջ մաս չունի. այժմ թոնի որդին առաջ զայ և ժողովրդի ներկայութեամբ իւր արած մեղքերը խաստվանի:

Հերթը վեսացուինն էր, որ զլուխը կախ արած կանգնել էր: Թագաւորը մօտեցաւ ձեռը բոնեց ու լալազին խօսեց.

— Աշխարհի բոլոր ժողովուրդը՝ աղքատ թէ հարուստ մեզ է նայում, սիրելի զաւակս. եթէ որ և է մեղք արել ես, մի ծածկիլ, անկեղծ խոստովանիր, որ իմ խիզճն էլ խաղաղուի:

Նորափեսան բաժանուեց նորահարսից, կանգնեց հրապարակի մէջ և ինչ արել էր, մի առ մի խոստովանեց: Ոչինչ պախարակիլի բան չկար: Ժողովուրդը զովեց.

— Ապրի մեր թագաւորագը, միշտ ախպէս պարզերես լինի. մեղք, յանցանք չունի, ապրի, շատ ապրի:

Բայց ծերունին պինդ կանգնեց իւր խօսքին և առաջարկեց:

— Ասա, թագաւորագ, անսա, մի ծածկիլ, էլի բան արած տնես, որ Աստծուն դուր չեկել:

— Ուրիշ յանցաւոր բան չեմ բոնել, կրտ-րական խօսեց նորափեսան, նշանաւոր բաներն այդ էին, որ ասի:

— Զես արել, լաւ, խօսեց ծերունին քըն-  
նողական կերպով նայելով թագաւորադի աչքե-  
րին: Թէ հիմի հարցիս ուզիղ պատասխան տուր,  
դու այս նորահարսին մինչև պատկի օրը տեսել  
էիր թէ չէ:

Այս հարցի վրայ թագաւորադի գոյնը փո-  
խուեց, ունքերին ու պոտնկներին հուզ տալով  
պատասխանեց.

— Այս, մի անգամ տեսել եմ:

Այս խօսքի վրայ հենց իմանաս ամրող  
ժողովուրդը ջուրը մղաւեց.

— Պատմիր լսենք, ինչպէս ես տեսել,  
առաջարկեց ծերունին:

Ամենի աչքերը թագաւորադնի վրայ էին:  
Սա ամաչելուց վարդի պէս կարմրել էր: Ուժ  
արեց, շիսթոթիւնը զավելով խօսեց.

— Իմաստոն ծերունի, այդ գէպքը մի ան-  
մեղ բան է. բայց երբ ստիպում ես, կասեմ:  
Մի անգամ զնացել էի անօրս տուն. նա աղ-  
քատ և հասարակ զատի մարդ է: Երբ ներս  
մտայ, մի քանի աղջիկներ կավին. ամենն էլ  
փախան այս ու այն անկիւնը: Գէմս կանգնեց  
միայն իմ հարսնացուն, որին դեռ չէի տեսել:  
Որտի տեղից էի զալիս. առի ինքս ինձ. «գնամ  
մօրս հաւանած հարսնացուին տեսնեմ»: Գնացի  
ու ձողիկն հանգիպեցի: Նրա գեղեցկութիւնը

տեսնելիս ես սկսեցի վատահովթիւնս կորցնել:  
Ինչ որ խօսելու էի, մտահան արի. ճարահա-  
տած ինչ որ լիքուս եկաւ, խօսեցի:

— Ի՞նչ ասիր, հարցրեց ծերունին:

— Կո՛ քննիկ, խմելու ջուր տուր:

— Նա ի՞նչ պատասխանեց քեզ.

— Աղջիկը ժպտալով պատասխանեց. «Քոյլը  
եղբօրը տեղի է սիրում քան հարսնացուն նշա-  
նածին, այդ պատճառով ջրի տեղ ես քեզ գինի  
կը տամ»: Եւ տուաւ: Ահա այդքանն է նշանա-  
ծին տեսնելս և հետը խօսելս:

Չերտունին հանգարս ձայնով վրայ բերաւ.

— Ել ինչու էիր զուր տեղը անմեղանում,  
թէ յանցանք չեմ արել:

— Ինչումն է իմ յանցանքը, շրապ հարց-  
րեց թագաւորադը:

— Քու յանցանքը նրա մէջն է, որ մի  
անգամ այս աղջկանը քոյլ ես անուանել, ետով  
ուզեցել ես հետը պսակուել: Այդ եթէ ծնողներդ  
իմանալին, նրանք էլ չէին յօժարուել, ինչ թէ  
Աստուած:

Լսող ժողովարդը մնաց պապանձուած.  
Նրանց հետ էլ թագաւորը, թագուհին: Լու-  
թիւն էր ամեն կողմ, ոչ մէկի բերանից ձայն,  
ծպտուն չէր լսում:

**ԺԳ.**

Երկար լռութիւնից ետք ծերունին դարձաւ թագաւորին ասաւ:

— Այս տղավին ի՞նչ ես խոստացել, եթէ սրդուդ ողջ ազատի ժամի միջից:

— Խոստացել եմ իւր ուզածը տամ, ինչ էլ լինի:

— Հիմի խօսքիդ տէրն ես թէ չէ, թագաւոր:

— Խօսքիս տէրն եմ, պատասխանեց թագաւորը, այսօր էլ, էզուց էլ: Ու դառնալով Օսէփին հարցրեց. ի՞նչ է ուզածդ, տղակ, ասա, կատարեմ:

Օսէփը լուռ էր, ամաչում էր սրտինն ասել: Ֆերունին ստիպեց.

— Մի՛ քաշուիլ, համարձակ ասա, որդի, ուզածդ ուկի՞ է, պատմա է, ի՞նչ է:

— Ո՛չ, իմ ուզածս դրանք չեն, խօսեց Օսէփը կարմրելով:

— Հապա ի՞նչ է, իրկնեց ծերունին:

— Իմ ուզածն այն է, կակաղելով ու անվաստահ խօսեց Օսէփը, որ թագաւորը այս Ճողիկ հարսնացուն ինձ տայ և մէկ էլ որտիշետե ես աղքատ մարդ եմ, հարսանիքի ծախոր ինքը քաշի:

Լսողները խնդացին ու դարձացան: Թագաւորը կարծել էր, թէ նա իրիւ աղքատ տղակ ազահութեամբ մեծամեծ հարստութիւններ կուղի, իսկի մտքով չէր անցկացրել, որ այդ չափ վորքը պահանջով կը բաւականանայ:

— Աչքիս ու զլիխս վրայ, խօսեց թագաւորը և բանելով նորահարսի թեւը աւելացրեց. այս օրից սա իմ հարսնացուն չէ, այլ իմ գուստորը. ուզածդ կը կատարեմ, այ տղայ, դու կը լինես իմ սիրելի վեսան: Իսկ իմ օրդու համար Աստուած ուրիշ հարսնացու կը հասցնի:

Մեծ բազմութիւնով գնացին պալատ. հարսանիքի բոլոր պատրաստութիւնը տեսած էր: Աշխարհի սովորութեան համեմատ թագուհին երեք անզամ Ճողիկին շապկի ծոցով հանեց, հոգեզաւակ դարձրեց: Թագաւորազը եղաւ խաչեղբար. Օսէփին ու Ճողիկին պատկեցին: Ուրախութիւնը, կերուխումը շարունակուեց եօթն օր ու զիշեր: Ֆերունուն պալատի մէջ լաւ օժեւան էր տուած. նրան սպասաւորում էր նորափեսան: Թագաւորի միտքն այն էր, որ հարսանիքից ետք Օսէփին բաժին հանի իւր ունեցածից և պալատի մի մասում բնակեցնի իմաստուն ծերունու հետ: Ֆերունին այդ տեսնում էր. բայց ուզում էր իմանալ, թէ Օսէփը թագաւորին վեսայ գառնալով իրան կը մոռանայ, թէ

չէ: Պատկի երկրորդ օրը խիստ տկարացաւ, կանչեց Օսէփին և ասաւ. «Հանիք ինձ այս պարատից, աղքատի տեղ չէ. եթէ ես քո բարին եմ, տար քո բնակարանում պահիր»: Օսէփը զաղիկին յացնեց իւր սրտի խորհուրդը: «Արա, ինչպէս կամենաս», ասաւ նա: Պատկի ուժերորդ օրն էր, Օսէփը ներկարացաւ թագաւորին և ասաւ.

— Անչափ շնորհակալ եմ քեզանից, թագաւոր տէր, որ խօսքիդ տէրը եղար և ուղածո կատարեցիր: Ալժմ արձակիր, որ ես գնամ իմ վաստակին:

— Վաստակն ինչիդ է պէտք, պատախանեց թագաւորը, ուղում ես նորից չարչարուել: Հարստութիւն ես որոնում, ահա շտեմարաններս բերանէ բերան լիք, որիշ տեղ ինչի ես գնում, նոտիր, վայելիր թռուից թու, ով է քեզնից ինսայողը:

— Ոչ, թագաւոր տէր, քո շտեմարանները իմ վաստակով չեն լցուած. մինչեւ օրս իմ քրտինքով եմ ապրել ու հոգեհօրս ապրեցրել, կնոջու էլ պէտք է իմ ուեպհական վաստակով պահեմ: Ես ոչ ծեր եմ և ոչ տկար, Տէրին փառք, նիւթական ողորմութիւնն ինձ հարկաւոր չի:

Թաղաւորը նկատելով Օսէփի հաստատա-

մբստութիւնը երկար չհակառակեց. «Ինչպէս կուղես, այնպէս արա» ասաւ ու թողեց նրա կամքին: Օսէփը ամենից շնորհակալութիւն արաւ, վերցրեց հոգեհօրն ու զողիկին և բնակուց արհեստաւորների թաղում:

### ԺԴ.

Փողովուրին որ այս իմացաւ, աւելի սիրեց Օսէփին: Իբրև որմնադիր նա երեելի անուն կանեց. այնքան զործ առաջարկողներ էին լինում, որ միջոց չէր զտնում բոլորի ինպիրը կատարի: Վռաւուները կանուխ գնում էր զորկածի և ծերունու հոգուը յանձնում կնոջը: Զողիկը ինսամերու կողմից պակաս չէր մնում Օսէփից. Ամեն օր լողացնում, մաքրում, փափուկ անկողնի մէջ իւր ծեռով պարկացնում էր: Ամեն կողնի մէջ իւր ծեռով պատուիրան էր ընմի հասարակ իսուքը ուուրբ պատուիրան էր լիրդունում և սպասաւորելու համար ոչ քուն խրնացում, ոչ հանգիստ: Քանի որ մասքերում էր ժամի մէջ փակուելը և ծերունու միջոցով այնժամի մէջ փակուելը և ծերունու միջոցով այնտեղից աղատուելը, չէր իմանում, թէ ինչպէս երախտազէտ լինի:

Թագաւորի պալատում այն պատիւները չէր ստանալ ծերունին, ինչ որ Օսէփի ու զողիկի մօտ, բայց ինչ կանես, որ բորն ու վերդիկի մօտ, բայց ինչ կանես, որ բորն ու վերդիկի մօտ էին անբուժելի: Օր օրի քերը զարձեալ մնում էին անբուժելի:

վրայ ծերունին տժից ընկնում էր. Էլ զեղ ու դարման չէր թողել Օսէփը, ամենն էլ փորձել էր: Իսկ ծերունին տեսնելով, որ Օսէփը իւր վիճակի համար շատ է տիրում, նրան մխիթարելու մտքով տիկարութեան պատճառը ծերութիւնն էր համարում ու շարունակ հառաջում. —Այս, երիտասարդութիւն, ախ, ջահերութիւն. ուր ևս, ինչ կը լինի վերադառնաս, ևս էլ աշխատանք անեմ, Օսէփը մենակ չտանջուի:

Ասոծու աչքը քաղցր էր Օսէփի վրայ, տարու գլխին նրան ջուխտակ զաւակ էր պարզեել՝ աղջիկ ու տղայ: Նրանք այնպէս սիրուն ու փափլիկ էին, կասես լորի ու աղունակի ճուտեր: Տեսնողի խելքը գնում էր նրանց վրայ. ծնողներն էլ ինչ ասել կուզի, որ սիրում էին ու նրանց մի մազը ողջ աշխարհի հետ չէին փոխիլ: Ծերունին նրանցով էր մխիթարում, մօտք նոտայնում, հետները մլուլ անում: Պտնատած ժամանակ «պապի» կանչելով վազում էր ին ծերունու զիրկն ընկնում, Օսէփի ու զողիկի սիրտը ցնծումով լցնում:

Թագուհին չէր մոռանում զողիկին, շուտ շուտ ընծաներ էր ուղարկում, և, հրաւիրում պալատ. բայց զողիկը ծերունու պատճառով չէր կարողանում տանից հետանալ: Մի անգամ էլ երբ զողիկի եղբայրը պէտք է սպակուէր, մարդ

եկա. Հարսանիք հրաւիրելու: Ոչ Օսէփը յօժառուեց, ոչ Զողիկը:

— Ի՞նչպէս թողենք, ասին, մեր հողեհօրը այս զրութեան մէջ ու մենք զնանք կերուխումի: Չէ, զուարձութիւն անելը մեզ չի սազիլ:

Այս մերժումը որ փեսացուն լսեց, իր ոտով վերկացաւ, եկաւ Օսէփի մօտ ու ասաւ.

— Ամբողջ տարինելով տանն էք, մի օրով չէք կարող բարեկամի տուն դնալ: Ազացում եմ, ինչպիս մի մերժէք, ինքս կը գնամ ձեր հոգեհօրից իրաւոնք կառնեմ: Կա բարի է, չի մերժիլ, զեռ շնորհակալ էլ կը լինի, որ ձեզ ուրախացնելու եմ տանում:

Զողիկի եղբայրն խսկոյն մտաւ ծերունու սենեակը, խոր զլուխ տուաւ ու խօսեց.

— Բարի. Քեզ մօտ մի բան ինզրելու եմ եկել:

— Ասա, որդի, ինչ է խնդիրդ:

— Քանի անդամ փեսիս և քրոջն հրաւիրել ենք մեր տուն ժամանակ անցկացնելու, ոչ մի անգամ չեն եկել, պատճառութերելով թէ՛ բարին հիւանդ է, մենակ է, ինչպէս թողենք, զանք: Մենք ընդդիմանալու տեղ ուրախացել ենք, որ արդքան խանարհ են զէպի մեծը և պարտաճանաչ. իրանց ծառալու-

թիւնով ուզում են քո արած երախտիքի սառ  
կից զուրս զան: Այդ ամենը շատ լաւ, բարի,  
իմ սիրտն էլ է ցնծում նրանց այդ քաղցր  
վարժունքը տեսնելով: Բայց բանը հիմք եկել է  
զատ տեղ մթնել: Եղուց իմ հարսանիքը նստում  
է. քանի մարդ եմ ուզարկել Սոէփի ու քրոջս  
հանից, նրանք մերժել են քո պատճառով: Ամեն  
պատրաստութիւն տեսած է, բարեկամներ ժո-  
ղովուած, բայց մայրա ամեն ինչ խանգարում է  
տաելով՝ մինչեւ Ճողիկ աղջիկս այսուղ ըրվինի,  
տղիս չեմ ժողիկ պսակ գնայ: Ինքո եկել եմ  
խնդրում որ գնանք, ելի չեն յօժարւում: Այժմ  
բանը մնացել է քեզ, բարի, աղաջում եմ, մօրս  
խնայիր. իրաւոնք առոր մի օրով քոյրս ու փե-  
սէս զան, իմ պսակի հանդէսին ներկայ լինին  
ու իսկոյն գառնան:

—Ես կարծում էի, թէ իրանք չեն ուզում  
ուրախատուն գնալ, խօսեց ծերունին, երբ ինչ  
են պսոտառ բռնում, կանչը նրանց այսուղ:

Սոէփին ու Ճողիկը շէմքից մօտիկ էին, այդ  
որ լսեցին, ներս եկան: Դերունին այսպէս խօ-  
սեց.

—Ճատ շնորհակալ եմ, որդիք, այն  
ինամքի ու հոգացողաւթեան մասին, որ ինձ  
համար քաշում էք: Ամբողջ տարով տանը փա-  
կուած էք իմ պատճառով. բաւական է, այժմ

էլ գնացէք, փոքր ինչ ուրախացէք: Բայց շատ  
չուշանաք, մի զիշերը բաւական է: Դրութիւնս  
կարող է վատանալ ձեր բացակացութեան ժա-  
մին. կը զաք ու ողջ չէք զտնիլ ինձ: Գնացէք,  
լիստիրս ուրախացէք, բայց թռոնիկներս ըլ-  
տանէք, թռողէք մօտս մնան:

Սոէփին ու Ճողիկը ուրախացան, երեխանե-  
րին ուտելիք ու խաղալիք տալով բերին ծերու-  
նու մօտ, իրանք նրա ձեռը համբուրեցին ու  
զնացին: Հարսանիք զնացողն ինչ կը տեսնի. —  
լաւ կլմանաք: Մինչեւ նրանց գնալը կերտ-  
իսումն սկսել էին. երբ Սոէփին ու Ճողիկին տե-  
սան, ծափն ու ծիծաղը, պարն ու խնդամը ա-  
ւելի թեժացըին: Դրանց թռոննք, որ կերն ու  
խնդումը շարունակեն, մենք գնանք ծերունու մօտ:

## ԺԵ.

Բարին իրիկունը մանուկների հետ զբա-  
զուեց, առակներ ասեց, խօսեցրեց. երբ տեսաւ  
քունները տանում է, շորները հանեց, քնաց-  
րեց: Ետով ինքն իրան տասւ. — «Լս. ազատ  
ժամանակ է, զնամ չորանին ու բաղմանին ալ-  
ցելութիւն»: Այս ասելով զաւազանը վեցրեց,  
քայլերը արագ փախեց. լսկի նման չէր թէ հի-  
ւանդ ծերունին է, թէ առած թռչում էր: Մի  
ժամուայ մէջ հասաւ այն սարը, որի լանջերի

վրայ քարերը ոչխար էին դարձել: Հրաշքով գիշերը ցերեկ դառաւ: Ծերտնու աչքովն ընկան մի քանի վրաներ, հաղարաւոր դառներ, բիւրաւոր ոչխարներ լեռների, բլուրների վրայ շաղ անցած արածում էին: Ծերտնին կոյր աղքատի կերպարանքով մօտեցաւ չորանին, սա մեծ վրանի առաջ նստած ոչխարի ու տաւարի տարեկան եկամուտը հաշւում էր:

— Բարի աջողում, չըրան եզրայր, ասաւ ծերտնին խղճալի ձախով, Աստուած քու մինը հաղար անի, աղքատ, հիւանդուտ ծեր եմ և շատ ժամանակ է տառելիքի կարօտ, քո անհուն հարստութիւնից քիչ բաժին տուր, ուտեմ, լիանամ և արդչափ բարիք պարզեսղին օրհնելով ճամբէս շարունակեմ:

Չորանը աղքատի կերպին ու վէրքերին նայելով երեսը շառ տուաւ, բարեկին կէս խօռքով էլ չպատասխանեց, այլ հեռու կանգնող տղալին հրաման արաւ:

— Ա! գառնարած, այս աղքատին կանչիր, նստացրու, մածոն, բան տուր, ուտի:

Գառնարածը կանչեց, մի կեզաստ թաղիքի կտոր տակը զցեց, առաջը զրեց երկու կտոր չոր հաց, մի աման թան և մի քրեղան մածոն: Ծերտնին նայեց գառնարածին ու ասաւ,

— Ա! որդի, հարիւր տարեկան մարդ եմ, ինձ

ատամն ովկ է տուել, որ այդ չոր հացերը ծամեմ. չէ որ թթու թանը վերքերիս վնաս է: Ես քո տիրոջից պաղատանքով աղքատի բաժին ուղեցի. չի կարելի հաղարաւոր գառներից մինը մորթի, մի շամփուր խորոված ու տացնի: Տաս տարի պէտք է անցկենայ, որ ինձպէս աղքատ դէսը զայ: Մի գառը մորթելով լինչ կը պակսի ձեր հօտերից:

Գառնարածը գնաց չորանի կուշտը և աղքատի վափագը յալտնեց: Գուռղ չորանը զիթ եզան պէս կամն տուաւ, քարերն ընկաւ, թէ ինչու աղքատը մարդամիջով զառն է ուղել: Մըռութը կախեց ու բարձրաձայն վայրահաչ տուաւ:

— Աղքատին մտիկ, իրան հրամայելուն. «մի զնուը մորթիր»: Կասես պահ տուած լինի: Քիչ էլ մնայ, որիշ մեծ հրաման կը տայ:

Գառնարածը գառնարածին պատովիրեց. — զնա արդ պնդերես ծերին ասա, ինձ համար ոչ թաճքած ձի ես բերել և ոչ կարմիր ձու. Ինչ որ տալիս են, յօժար կամքով կեր ու անխօս հեռացըլի, թէ չէ շներով կը վոնդեմ: Աղքատին մտիկ, թան ու մածնին հաւան չկենակուն:

Ծերտնին թաղքի վրայ նստած լուսմ էր այս ամեն նախատինքը, ծաղըը և զլուխը չուրանի ապերախտութեան, աղահութեան վրայ

օրօրում: Գառնարածը մօտեցաւ ծերունուն և  
տիրոջ պատասխանը համառօտ խօսքով բայտնեց:

— Ճատ բարի է հրամալում տէրդ, ասաւ  
ծերունին. կանչիր զէսը գայ, մի խօսք ունիմ  
սաելու. առեմ ու գնամ.

Գառնարածը բարի տղայ էր, դնաց տիրոջը պատմեց: Չորանն աւելի կատաղեց ու  
փոքրաւորի վրայ բարկանալով բզաւեց.

— Ես ով, նա ով, որ կանցում է; Ո՞վ զի-  
տէ, ինչ ցաւոտ աշխարհից է զալիս: Ինձ հետ  
որ բորոտ աղքատը չխօսեց, ազուաւները ուշ՝ կը  
հազնեն: Գնա, ասա, իմ տէրը ժամանակ չու-  
նի: Տարածդ թանը ուտում է, ուտի. թէ չի  
ուտում, թող վերկենայ կորչի, այնտեղէրք չա-  
պականի:

Այս էլ որ լսեց ծերունին, կամաց տեղից  
վեր կացաւ ու ձախնը քիչ բարձրացնելով խօսեց.

— Ա! չորան, լաւ լսիր ինչ որ ասում եմ:  
Դու այն աղքատ ճամբորգը չմս, որ մի քանի  
տարի առաջ ինձավէս ծերունու միջոցով Աստը-  
ծոց տառար ու ոչխար տղեցիր: Դու չխօս-  
տացմը, որ եթէ Աստուած ցանկութիւնդ կա-  
տարի, ստացած հարաստութիւնիցդ ամեն ան-  
ցորդի, մանաւանդ ծեր աղքատների բաժին  
հանես: Յիշում ես: Աստուած տղածդ տուաւ և  
քո սիրտը փորձելու համար կուր աղքատիս քեզ

մօտ առաքեց: Տիրոջ պարզեած հազար դառ-  
ներից մինը խնացեցիր մորթել և նրանով կե-  
րակը Աստծու աղքատին: Բաւական չէ, որ ան-  
հուն բարիքի ամենափոքր մասը խնացում ես  
աղքատից, գեռ նրան ծաղրում, հայհոյում էլ ես:  
Այդ էին տրեմն քո մեծամեծ խառամունքները  
բարեգործութեան մասին: Ափսոս չէ Տիրոջ ո-  
գորմութիւնը, որ քեզ պէս աղահ, աչքածակ  
ճիճուն վայելի:

Այս ասելով ծերունին ձեռի գաւազանը  
մեկնեց զէպի սարի լանջը և հրամախական  
ձախով զոչեց.

— Քար էիք, այս ոչխարներ, կրկին քար  
դարձէք:

Այս հրամանը լսուց թէ չէ, արածող ոչ-  
խար, տաւար քար կտրուեցին: Ազահ չորանի  
առաջից չքացան վրաններն էլ, գառնարածն  
ու տաւարածն էլ. ինքը մնաց քարերի մէջ  
մահակն ուսին, ճոմբորդական տոպրակը կող-  
քին:

Թոնդ չորանը ազահութեան պատճառով  
զլիին վայ տայ, մենք հետեւենք ծերունուն,  
տեսնենք մէր է դնում:

### Ճ-Զ.

Այդտեղից մի լուսէում աներեւութացաւ:  
Թւե առածի պէս գնում էր: Հասաւ բաղմանի

կալուածքին: «Ապա տեսնեմ, սա ինչպէս է կատարում իր խոստումը», ինքն իրան խօսեց ծերունին և կաղ աղքատի կերպարանքն առնելով մօտեցաւ այդու դռանը, կանչեց. «այդետէր, այ այգեսէր»:

— Հէ!, հէ!, ով ես, ձայն տալով առաջ եկաւ բաղմանը ու տեսաւ մի պատըրտուած ծերունի է համարձակ կանչողը. սառը կերպով հարցրեց.—ինչ է, ինչ ես ուզում:

— Գուռը բաց արա, բան եմ խնդրելու:

— Թրսից չես կարող առել, թժուած վրայ բերաւ բաղմանը:

— Այդին հօ չեմ ուտում, օրհնուածի որդի, ինչու ես խնայում, ասաւ ծերունին:

— Հը, ասա, տեսնեմ, ինչ է ասելիքդ, փնթինթալով գուռը բաց արաւ բաղմանը և սպասում էր որ կաղ աղքատը ասելուն ասի. բայց նա առանց իրաւոննք խնդրելու անխօս մտաւ այդին: Բաղմանը քթի տակ փնթփնթաց. «ինչ պնդերես մարդ է եղել»:

Այդու վազները, ծառերը բեռնաւորաած էին ու սիպտակ խաղողներով, հասուն, կարմրաթուշ պտուղներով: Այդին այնքան մեծ ու բնդարձակ էր, որ ճորթ ու ծայրը չէր երեւում: Ֆերունին մէկ դէս նայեց, մէկ դէս ու ետով խօսեց.

— Աստուած արժան անի քեզ, բաղման եղբայր, շատ բերքով կալուածք է: Ո՞վ զիտէ այզին շինելու ժամանակ քանի անդամ այս այզին շինելու ժամանակ քանի անդամ Աստծուն ուխտ ես արել. «այ Աստուած, զու իմ այզին լիառատ բերքի հասցրաւ, տես, ինչ քան կարօտեալների եմ կշտացնում»: Ես աղքատ ճամբորդ եմ ու վազուց կարօտ էի մնացել խազովի ու պտղի: Ի՞նչ լաւ էր, որ այս ազգուն պատահեցի: Աստուած քո մէկը հազար անի, այն երեսոյ հասուն պտուղներից ու քաղցր խաղողներից մի քիչ տուր, ուտեմ, քեզ է օրհնեմ, քու այզու բերքն էլ:

Բաղմանին իսկի գուք չեկան ծերունու զըլուցները, ձեռնտու չէին. կաղ սովի հետ մարմնի լուցները, զեռնտու չէին. կաղ սովի հետ մարմնի վէրքերն էլ որ տեսաւ, զգուանքից քիթ ու վիճակից: Չողից այզու լաւ բնակարապինչը հաւաքեց: Չողից այզու լաւ բնակարանը ցոյց տայ, «աղքատ մարդ է, մտածեց բաղմանը, կը զայ առանց տաելու խալիչի, դոշակի վրայ կը նստի, վահրատ կանի: Այսօր որ քաղցր ընդունեմ, վատ կըստվորի, ամեն օր կը զայ»:

— Ֆերունի, ասաւ նա, զու այդ գուան մօտ սպասիր, գնամ քեզ համար խաղող ու պտուղ բերեմ:

Բաղմանը գնաց ու երկար ժամանակ մլուլ արաւ: Խեղճ ծերունու աչքը սպասելուց չուր կտրուեց. բաղմանը չկայ ու չկայ: Վերջի վեր-

Հը վազնուտի միջից երևաց ու փէշը բարձր  
բռնած եկաւ ծերունու մօտ:

— Նստիր, ծերունի, ահա քեզ խաղող ու  
պտող, այնքան բերել եմ, որ համ ուտես, համ  
տանես:

Այս ասելով փէշի ծալրերը բաց թողեց և  
մէջինը թափեց գետնի վրայ:

Ֆերունին նայեց բերածին և ասու:

— Հէնց սրա համար արքան ուշացած,  
հէր օրհնած: Ազուդ մէջ՝ էլ խակ ու թթու  
պտող, էլ թողաթակ ու ճանճակեր խաղող  
չես թողել, բոլորն էլ քաղոտել ես, բերել: Մի-  
թէ զիտես, որ հիւանդու մարդուն թթու  
բաները սաստիկ վիստ են: Աստուած այս ու-  
հազին ալզին քեզ է տուել, մի ճիթ քաղցր  
խաղողն ի՞նչ է, որ ինձ պէս աղքատից ի՞նտ-  
յում ես. զոնէ ծերութեանս խղճա:

Բաղմանը այս յանդիմանութեան վրայ  
իխտ վշտանալով պատսախանեց.

— Այդ բերածը շատ լաւն է, խօսելի ին-  
չու համար է, պնզերես աղքատ. լաւ խաղող  
ու պտող ես պահ տուել, որ բերածիս հուտն  
չես: Եւ ի՞նչ զիտես, թէ իմ ալզու լաւ բերքը  
դրանք չեն:

— Այ սրդի, ինչու ես բարկանում: Ես այն  
եմ ասում, որ այն երևող խաղողն ու պտող-

ները հասած են, իսկ քու բերածը թթու են  
և ինձ վիստ: Ի՞նչ ամօթալի պակասութիւնը  
աղքատութիւնն է, որ երեսովս ես տալիս: Գու  
քու մօրից արդպէս հարուստ ես ծնուած: Ա-  
սենք թէ՝ հարուստ ես և չես ուզում աղքատ  
տեսնել. այդ քու կամքն է, բայց տեսնում ես,  
որ ես ծեր եմ ու հիւանդու, միթէ չես մտածում,  
որ մի օր էլ զու ես ծերանալու կամ հիւան-  
դանալու: Մի կամ երկու ճիթ խաղող արկելով  
վախում ես ալզիդ հատնի: Այսքան խաղողն ու  
պտողը ով պէտք է ուտի:

Բաղմանը համբերութիւնից դուրս եկաւ.  
Ժանզերը հաւաքելով ճշաց ծերունու վրայ:

— Ի՞նչ ես շատ գլուխ տանում, աներես  
աղքատ. չես ուզում, հաւան չես, թող մնայ.  
Քեզ լինլրադ չկայ, թէ՝ հալ-հարալ կեր: Այդ  
զու, այդ քու եկած ճամբէն, ձեռիցդ ըւնդ  
չկայ, վեր կաց, հեռացիր, այստեղէրք մի կեղ-  
տոտիլ:— Է՞ս, ձայն տուեց ծառավին, եկ այս  
զարշելի արարածին դուրս զցիր:

Ֆերունին հանդարտ էր ինչպէս ծով. խա-  
ղող կերպով տեղից վեր կացաւ ու բաղմանին  
նայելով խօսեց.

— Այ հարուստ այդետէր, ցիշում ես թէ  
մի քանի տարի առաջ ի՞նչ տնանկ մարդ էիր.  
ինձ պէս մի կաղ աղքատի միջոցով դու Աստծոց

ալդի ուղեցիր, որ նրա բերքով պատահած աղքատին, կարօտեալին լիացնես, քու միջոցով ամեն մի անցորդ Տէրին փառք տայ: Այդ խոստումի վրայ Աստուած քեզ ամբողջ ալդի նուիրեց և մի քանի տարի անցնելուց ետք իւր աղքատներից մէկին առաքեց քու սիրտը փորձելու համար: Այսօր մի ճիթ խաղողը ինսայսմ ևս նրա աղքատից: Գնաւ, ապերայխաւ արարած, արժան չես Աստծու առանձին շնորհին ու ովորմոթեան. ինչպէս չքաւր էլիր, այնպէս էլ կը գնաւնաս:

Բաղմանը նշանակութիւն չտալով ծերուն խօսքերին, սկսեց պինչը ծռելով տնաղ անել կամ սուտ կազի տալով նրա աւաշն անել: Այդ փայտինին ծերունին դուրս եկաւ ալդոց. գաւազանը սպառնական ձեռվ բաղմանի վրայ շարժելուց ետք, դարձաւ բայսերին և հրամայից.

— Ֆնաւեր, վաղներ, անպոռող բոյս էլք, Եղէք կրկին անպոտեղ:

Այս ասելն էր, որ մի ակնթարթ չքաշած պտղաւէտ ալդին փախարկուեց փայլի անտառի. չքայաւ ամեն ինչ. միայն բաղմանը մնաց պինչը ծռու, անտառի պուլնին կանդնած:

### Փ-Ե.

— Այժմ ժամանակ է օթևանո դնալու, ասաւ ծերունին ու դէպի քաղաք դարձաւ: Մի

զիշերուալ մէջ ալդքան ճամբորդելով առաւոտն այնպէս կանուխ հասաւ իւր օթևանը, որ զեռ Օսէփին ու զողիկը հարսանիքից չէին դարձել:

— Վերջին անգամ սրանց էլ փորձեն և հեռանամ, ասաւ ծերունին ու անկողին մանելով Հոգեարք ընկաւ:

Հարսնքատանը դեռ կեր ու ինդումը շարունակում էր. ծերունու սրոշած ժամը լրացաւ: Զողիկը Օսէփին ասաւ. «Չտապիր, սիրելիս, ժամն անցաւ, Հոգեհարդ այժմ սպասելիս կը լինի, շնուր համիր, ևս էլ դալիս եմ»:

Օսէփին խկրոն պատրաստուեց ու շտապով հասաւ տուն: Մտաւ մանուկների սենեակը, տեսաւ զաւակները քաղցը քնի մէջ են: «Ի՞մ աղունակներ, սիրուն հրեշտակներ» շշընջաց նա, կրացաւ մի մի համբուրեց ու թեքուեց Հոգեհօր սենեակը: Ֆերունին պարզ լսել էր. թէ ինչ սիրով Օսէփը գուրգուրեց և համբուրեց անմեղ մանուկներին: Նրա զայն իմանալով սկսեց տնքտընքալ և բարձր հառաչել:

Օսէփը որ ներս մտաւ ու իւր սիրելի բարերարին Հոգեարքի մէջ տեսաւ, կարծեց թէ սրտին թրով խիեցին:

— Ի՞նչ եղաւ քեզ, բարի, ինչու ևս հառաչում, խօսեց Օսէփը ու սկսեց մէկ ոտները մաժել մէկ ձեռները մեղմիկ շփել: Եթէ այս

պէս հիւանդանալու էիր, լինչու ուղարկեցիր մեզ  
հարսանիք: Հիմի ես ո՞ր հողը տամ գլխիս, ո՞ր  
քեզ այդ տանջանքից ազատեմ: Ոչ մի անդամ  
դու արագէս ծանր չես եղել: Ոչ կայք կուգէի,  
ոչ կեանք, ոչ բաղդաւորաթիւն, միայն թէ  
քեզ առողջ տեսնէի: Ասա, բարի, մի ճամբայ  
ցոյց տուր. աշխարհի տակ ու զլուխը զիտես,  
քու իմաստոթեան վրայ հասարակ մարզից  
սկսած մինչեւ թագաւորը զարմացած են մնա-  
ցել, բա մի հնար չես լսել քու բորոտութեան  
ու խոցերի մասին, որ ես կատարեմ, դու դրան-  
ցից ազատուես ու ժրուես:

Ծերունին տեսաւ, որ Օսէփի ցաւակցու-  
թիւնը անկեղծ է, փղձուկը սիրտը լցրել և  
փիրած աչքերով իրանից պատասխանի է սպա-  
սում, ասաւ.

— Ճար կայ, ո՞րդի, լինչու չկայ, բայց...  
շատ ծանր բան է:

— Ի՞նչ է այդ ճարի անունը, որ դժուար  
է. ասա, բարի ջան, երեսն ի վեր թախանձեց  
Օսէփը և ձեռները համբուրեց: Ոչ մի զոհաբե-  
րութիւնից ես վախեցող չեմ, քու սիրու համար  
ամեն բան ջուրը կը թափեմ, որտինդ ասա,  
բարի, համարձակ ասա:

Ծերունին թոյլ ձայնով պատասխանեց.

— Սիրելի Օսէփ, իմ ասլրելը քեզ լինչ

օգուտ: Հերիք չ'ը որքան չալչարուեցիք դու  
ու զողիկը: Հաղիւ մահուան հրեշտակը եկել,  
բարձիտ վրայ պտուռմ է. թողէք վերջանալ  
վշտալից կեանքս, զուք էլ, մեղք էք, հան-  
զլուտացէք: Իմ ցաւերից բժշկուելը ծանր կը  
նստի,

— Ինչքան էլ ծանր պայման լինի, պէտք  
է կատարեմ, բարի. զու հնարի անունն ասա:  
Երդւում իմ մօրս զերեզմանով, որ խօսքս խօսք է:

— Ա! որդի, թոյլ տուր, շատ մի ստիպիլ:  
Կասեմ հնարը, բայց եսով չես կարող կատարել,  
ամօթով կը մնաս:

— Ոչ, բարի, երգաւմս հաստատ է, պէտք  
է կատարեմ, ասա:

— Լաւ, Օսէփ, երբ ստիպամ ես, կսսեմ  
ու իմ պարտքից գուրս կը զամ, նրանից եսը  
դու զիտես:

Այս խօսքի վրայ վլուխը կախեց ծերունին,  
ծառքի խորն ընկած մի քիչ լուռ մնաց ու եսով  
Օսէփին դառնալով ասաւ.

— Վի ջրախ զեզ կայ, եթէ ճարտի, որ  
նրանով մարմինս լուանամ, մի վազկենում ոչ  
միայն բորստոթիւնից կը սլքնեմ, այլ և ծե-  
րութիւնս կանցնի, երիտասարդի աշխոյթ կը-  
ստանամ ու քեզ պէս իմ հացը իմ ձեռով կը  
վաստակեմ:

— Այդ առաւել լաւ, բարի ջան, կը ջահելանստ, երկու հարազատ եղբօր պէս կասպենք։ Պէտք առաջ շուտով, ինչ է այդ ջրալի զեղի անոնը, որ գնամ խալոյն ճարեմ, խոսեց Օսէփը որախացած։

— Ո՞վ կը տայ քեզ այդ զեղը, որ խսկոյն բերես, սիրելի Օսէփ։ Ո՞վ կը տայ քեզ իւր մանուկների արխանը, որ բերես, նրանով մարմինս լուսնամ։ Անմեղ մանուկների անարատ արխանն է իմ բորստոթեան ու խոցերի միակ զեղը։

Այս ասաւ ծերունին ու զրոխը կախեց, որ Օսէփի շփոթութիւնը ըստեսնի։ Խակ Օսէփը զարմանալի ստունասրտութիւնով վրայ բերաւ.

— Ճշմարիտ ես ասում, բարի, ուրիշը կը մերժի խնդիրս և իրաւունք ունի։ Բայց ես ինչու եմ ուրիշի զիմում այդ զեղը ճարելու համար, քանի որ ինքս իմ տանն ունիմ։ Քեզ պէս հօր համար անձս չեմ խնայիլ, ինչ թէ որդիքս։

Այս ասաւ ու գնաց մանուկների սենեակը։ Նրանք զեռ քնած էին։ Մի երկու բողէից ետք դարձաւ ծերունու սենեակը և ասաւ.

— Ահա, բարի, ուզածդ բերի, առ, լուացուիր։

## Փ-Ք.

Հէնց այս խօսքն էր Օսէփի բերանում, բակի գուռը չըբխկաց։ Մինչև այդ միջոցը Օսէփը քաջ ու անփոփոխ էր մնացել. երբ զզաց, թէ կինը դալիս է, սիրար դողաց, զէմքը սփարժնեց։ Կրա առաջը դուրս եկաւ և շատ աշխատեց, որ ուրախ երեալ, չեղաւ, չաշողուեց։ Ճողիկը կարծելով թէ Օսէփի տիխութիւնը հոգեհօր պատճառով է, հէնց առաջին խօսքը նրա վրայ բերաւ։

— Ի՞նչպէս է բարին, Օսէփ, հօ փորձանք չի պատահել։

— Փառաք Աստուծոյ, մեծ վտանգն անցկացաւ, սրանից ետք լաւ կը լինի։

Այս խօսքերն առելիս Օսէփը պրունկները կծեց, որ կարենայ փղձուկը կնոջից պահել, կոկիծից աղիքները կորաւում էին, ցաւը լոյն չըր հանում։ Կինը ուրախացաւ լած տեղեկութեան վրայ ու խօսեց։

— Փառաք Աստծո, որ բարիին վտանգ չի պատահել, բայց դառնուկներս ուր են, ինչու նրանց ձայնը չի լուռում։

— Երեխաները գիշերս երկար են զրոյց արել պապի հետ և ուշ են պարկել, քննչատ են, չուզեցի քաղցր քունները խանգարել։

— Ուրեմն ես գնամ բարիին շնորհակալու-

թիւն յայտնեմ, որ այս գիշեր լաւ պահպանել է որդոց, ներողութիւն էլ խնդրեմ տշանալուս համար:

Ասաւ ու շտապ մտաւ զողիկը ծերունու կացարանը: Չորս բոլոր նայեց, տեսաւ աղամորդի չկայ. անկողինը իւր տեղն էր, մէջը հիւանդ չկար. միայն անկիւնում կարմիր ներկուած տաշտակն էր ընկած: Զողիկը վախակաւած դուրս վագեց ու շէմքում կանգնած Օսէփին հարցրեց.

— Ո՞ւր է բարին, ոչ կացարանումն է, ոչ անկողնում:

Օսէփը լուռ էր ինչպէս մրրած ծով: Հազիւ լսելի ձայնով ինքն իրան ասաւ, «Երևի փախաւ ծերունին: Կորմն որդիքս, վայ իմ զլիխին: Այժմ կնոջս ինչ սրտասխան տամ»: Այս մտածմունքի մէջ էր Օսէփը, որ մանուկների սենեակի գուռը ներսից բացուեց ու մի գեղեցիկ տղամարդ երևաց: Օսէփը նրան ճանաչելով կանկածու կերպով նայեց ու հարցրեց.

— Ո՞վ ես, այ մարդ, այստեղ ինչ ես շինում:

Զողիկը գուրսն էր, այդ մարդուն չէր տեսնում: Օսէփը գիտութիւնով զռան առաջ կանգնել էր, որ կինը շուտով ներս չգնայ ու երեխանց անկողիններին մօտենայ: Օսէփի այդ

վախը և սփարթնած զէմքը նկատելով անծանօթը, կանգնած տեղից ժպտաց և նրա հետ արագէս խօսեց.

— Օսէփ, միթէ քու բարիխն չես ճանաչում: Տես, ինչպէս երիտասարդացել եմ քո տուած գեղով: Մեծ էր քո հաւատը, Օսէփ, օրհնուվիս, գօրմնաս, որքան քո սիրտը կուզի: Երանի թէ քու հարիւրականի չափ չորանն ու բաղմանը հաւատարմութիւն ունենալին: Մի արգելիլ կնկանդ, թնդ մօտենայ, համբուրէ իւր աղունակներին: Վարեցէք անուշ, երջանիկ կեանքով, ինչ որ չորանից ու բաղմանից խլուեց, աւելցուկով կը տրուի ձեզ:

Այս ամեն խօսակցութիւնը կինը լսում էր, բայց չէր տեսնում ինչ տեսակ մարդ է: Օսէփը արձանի նման մնացել էր կանգնած, այդ բոլոր ժամանակ նա միայն աշխատում էր, որ իրան քաջ պահի: Մանուկների անկողնի վրայ նայեց պահի: Մանուկների անկողնի մատուցեց ներս գեղեցիկ ներս գնի: Ինքն իրան ասում էր.

— Ես ինչ սրտով անկողնին մօտենամ. եթէ վերձակը բարձրացնեմ, զաւակներիս արիւնշաղախ մարմինները պէտք է ընկնեն կնկան շաղախ մարմինները պէտք է ընկնեն կնկան շաղախ անմեղ մանուկներիս ու անշունչ զիակները վերձակի տակն ածեցի:

Բայց զողիկն էլ չհամբերեց, երեխաներին  
տեսնել էր ուզում:

—Ի՞նչ անեմ, որ քնչատ են, թող գնամ,  
համբուրեմ:

Ասու միամիտ մայրը և հանգլատ պրառլ  
մօսեցաւ անկողիններին ու վերմակի ծալըը  
կամաց վեր քաշեց, որ չզարթեցնի:

### ՓԹ.

Օսէփը շէմքի մօսից սրտադող մէկ կնկանն  
էր նայում, մէկ մանուկներին: Կանգնած տեղը  
յանկարծ ճչաց ու վաստ դառածի պէս մնաց:  
Մասուկների գլխիկները ժաժ էին դալիս. Օսէփը  
աչքերը չուած նայում էր լուռ: Քիչ էլ անձան  
համբերեց, ակնապիշ նայելիս նկատեց, որ մանուկ-  
ները թաթերնին շարթեցին, տարան աչքները  
հաղաղեցին ու քնաթաթախ «նանի» կանչեցին:  
Ճողիկի սիլտող սիրուր կատես այդ խոռքի  
վրայ հալ գնաց, մայրակոն զթով կուացաւ,  
զաւակների երեսներից համբուրեց և ձեռով  
գլխները շինելով ոկտեց զուրգուրել:

—Գմոնուկներս, տանցէք, տեսնիմ, իրի-  
կունը պատի հետ ինչ զլացներ արիք:

Ճողիկի արտ խօսակցութեան վրայ Օսէփը  
խելազարի նման «այ հրաշք» աղաղակեց ու  
սենեակից զուրս թռաւ գոռալով. «Ծատուած էր

նա, Տէլ-Ինքն էր նա»: Վաղվրդելով տչք ա-  
ծեց տան ըոլոր սենեակները, ամբողջ բակը տակ  
ու գլուխ արաւ, երիսասարդ մարդին չգտաւ:  
Բակի առջևով անցնող մարդկանց հարցըեց.  
«այս ու այս նշանալ ոքմին չտեսաք»: Ոչ ոք  
տեղեկութիւն չունէր:

—Ուրեմն տներեւաթացաւ, գնաց, ծընկ-  
ներին խփելով խօսեց Օսէփը ու դարձաւ կնոջ  
մօտ: Ճողիկը բան չհասկանալով Օսէփի արար-  
մունքներից ու խօսքերից միամտաբար հարցյլեց.

—Ո՞ւմ վլայ ևս խօսում, սիրելիս, ով էր  
Ծատուածը, ով աներեւաթացաւ:

—Մեր հիւանդ բարին, Ճողիկ ջան, հա-  
մարեաւ լալաղին պատասխանեց Օսէփը: Այսո-  
րուան իմ տեսածները միայն Ծատուած կարող էր  
անել: Ես հրաշք տեսալ, նա հատարակ մարդի  
ձեռից չէր գալ:

Այս ասելով Օսէփը յոպնած, թուլացած  
յովունքների ձեռից նտաեց ու գէմքը ծածկե-  
լով մտքի խորն ընկաւ: Ճողիկը մանուկների  
շորերը հազցըրել էր, վերջացըրել էր, դարձաւ Օսէ-  
փի մօտ:

—Ասա, սիրելիս, այդ ինչ հրաշք է, որ  
զու տեսել ես: Ի՞նչ տեղ տեսար, ում ձեռով:

—Հէնց քո տամեր, ծերանի բաքեի ձեռով:  
Ահա, լիր ասեմ, այսպէս, այսպէս բան եկաւ

զլոխս, ջողիկ ջան, երբ քեղանից առաջ եկար  
տուն:

Օսէփիր միառմի պատմեց կնկանն այս, ինչ  
որ դուք գիտեք և վերջն էլ աւելացրեց.

— Այսուղ ինձ հետ խօսող մարդը մեր բա-  
րին էր՝ առողջացած, ջահէլացած: Ասացի՞ կը  
մնայ, եղբայր կը դառնանք, իրար հետ արդար  
վաստակ կանենք, բայց թուել, գնացել է երկինք:

— Երազ ես պատմում, Օսէփ, ինչ է, իսո-  
սեց ջողիկը չհաւասարավ նրան:

— Երազ չէ, աչքի լոյս. եղելութիւն եմ պատ-  
մում. մի ժամից առաջ զաւակներիս իմ ձեռով  
ես սուրը քաշեցի, այժմ ահա բակրում ողջ-առողջ  
վազվզում են:

— Ուրեմն դու, ուղիղ դանակ ես ածել զա-  
ւակներիս վրայ, սարսափահար ճշաց ջողիկն ու  
մազերը փշաքաղած, աչքերը արիւնակալած  
դուրս վագեց բակը: Մի րոպէում խաղացող ե-  
րիխաներին կալաւ, գիրկը քաշեց ու լալով  
համբուրեց մէկ սրան, մէկ նրան: Օսէփի պատ-  
մութիւնն ստուգելու համար ուշի ուշով նայեց  
նրանց վզներին. դանակի քաշած տեղը պարզ,  
աշկարակ երեսում էր: Ջողիկը նորից կրծքին  
կպցրեց զաւակներին, վզների ողջացած տեղերը  
համբուրեց ու աչքերը երկինք բարձրացնելով  
աղաղակեց.

— Փառք Քեզ, Աստուած, անվերջ վասոք-ք-  
մինչեւ դերեզման Վու խոնարհ աղախինն եմ:  
Քանի բերանումն շունչ կը լինի և կոնումն  
ոյժ, միշտ պատրաստ եմ սպասաւորելու: Վու  
անունով իմ դուռն եկող կաղերին, կոյզերին,  
բորստներին, անտեղ տղքատներին:

Այս գրոցը լսել եմ Գանձակ, 1892 թ. մի  
70 տարեկան ծերունուց (զարգար Առաքել), որը  
պատմել է նոյնպէս «Ճէն թագաւոր» գրոցը:  
Հ ե ղ ի ն ա կ.

Բ Ա Յ Ա Տ Ր Ե Լ Ի Բ Ա Խ Ե Ր

Անկ-մանկ լինել—ապշել,  
Աւոչ—կերպ, տեսակ,  
Եւելցուկ—տաելորդ,  
Ռոտկ դառնալ—խախտառակուել,  
Բաղման—այգեսպան.  
Բաբի—ծերունի, հարփիկ,  
Թաղիք—բրդէ զետնաշոր,  
Ծեղ—շիւդ,  
Ծղձղալ—ծեղի պէս վերցնելով ուտել,  
Ծկրակել—ծածուկ նայել,  
Կապս—կազմուածք,  
Կածան—նեղ շաւիդ,  
Հալ գնալ—հալուել,  
Չեռնահարել—անդղել,  
Ճպճպացնել—թարթել,  
Ճիթ—ողլոյզ,  
Մլուկ անել—զբաղուել,  
Մաժել—մերսել, տրորել,  
Յեռ—ուլլացաւ,  
Ատնառտել—ոտի կանդնել, մանգալ,  
Վագնուտ—որթերի շարք,  
Վահրոտ անել—թարախոտ անել,  
Տհալ—դառւրմայ, տապակած միս,  
Տնազ անել—ծաղրել,  
Յաքատ—կեռակառոց մեջ դանակ,  
Քերծ—ժայռ, տապառաժ,  
Քրեկան—հողէ, կաւէ աման.

Իմ աշխատութիւններից առանձին զըս-  
քոյկներով տպուել են.

	Գինը
1. Հեքիաթներ (5 պատմութիւն)	30 կ.
2. Վաղինար	20 »
3. Խարազի տպակ (Հրատ. Ընկ.)	40 »
4. Ջէն թագաւոր	25 »
5. Խուլ Խաչիկ	25 »
6. Գալօ Ափօ	10 »
7. Աստուած Ճանաչող	10 »
8. Աստուած աղքատի Կերպում	20 »

Դիմել Կենդրոնական գրավաճառահոց

## ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

Ըստով մամուլի տակ կը մտնի «Մանուէլ  
զօրակար» պատմական վէպիկը,

834

ՀՀ Ազգային գրադարան



NL0596854

